

Խմբագրական

ՀԱՅ ԸՆԼԱԼԸ ԿՐ ՊԱՅՄԱՆԱԲՈՐՈՒԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՈՎ

Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն, ազգային օրակարգի հիմնախնդիր կը դառնայ ընդհանրապէս Հայ մշակոյթը, կը խօսինք, կը գրենք անոր մասին, կը պանծացնենք ու կը բարեբանենք զայն, առանց մինչեւ վերջ հասկնալու այս չարաչար հոլովուած, հոլովուող, թուրակաբար կրկնուող եզրոյթ-հասկացութիւնը....



Ազգի մը, ազգային պետականութեան մը էական բնորոշիչը մշակոյթն է իր ամենէն լայն իմաստով, ուր կ'արտացոլայ անոր ուրոյն երանգը՝ համաշխարհային մշակոյթներու ներկայանակին մէջ, անոր ուրոյն տեղն ու դերը մշակոյթներու խճանկարին մէջ, անոր սեփական դիմագիծը աշխարհի ժողովուրդներու խառնարանին մէջ....Ո՛չ տնտեսական, ո՛չ ռազմական հզօրութիւնը, ո՛չ աշխարհագրական կամ աշխարհաքաղաքական նպաստաւոր դիրքը պիտի կրնար արտացոլացնել ժողովուրդի մը, երկրի մը էութիւնը, ոգին, դիմագիծը՝ առանց անոր մշակոյթին:

Մեր պարագային, հայեցի հարագատ մշակոյթն է ազգային մեր ինքնութեան, ազգային մեր էութեան բանալին, որ արտայայտութիւն կը գտնէ հայ գիր ու գրականութեան, հայ բանաստեղծութեան, հայ երգ ու պարի մէջ, հայ ճարտարապետութեան, նկարչութեան, կերպարուեստի երկերուն, կոթողներուն, յուշարձաններուն մէջ, ուր վճիտ ցոլքով կը ցոլան՝ հայ հոգին ու ոգին, աշխարհը ընկալելու, զգալու, ապրելու հայեցի կերպը, ոճը, գեղեցիկի ճաշակը, հայուն հոգեբանութիւնը, մտայնութիւնը, նկարագիրը, երազն ու տեսիլքը...: Տակաւին, անոնց մէջ կը գտնենք հայրենի աշխարհը, որ Կոստան Չարեանի սեղմ տողերով՝ «Խոր եւ ներուժ պարգութիւն է....Լոյս է եւ քար: Պղնձացած ժայռերով կոխկոտուած ամայութիւն: Խենթ մի հով:... Բայց ուր «քո հոգուդ մէջ, յանկարծ, կ'իջնի կրակով, հրաշքով գրուած գիրք մի բաց...»: Ի՛նչ խորիմաստ կը հնչէ Կոստան Չարեանի սեղմ բնութագրումը հայրենեաց աշխարհի. «Խոր եւ ներուժ պարգութիւն է Հայաստան»....: Այս խորունկ բայց վսեմ ու լուսաւոր պարգութիւնը կայ, արդարեւ, մեր վանքերուն ու եկեղեցիներուն մէջ, հայ երգ ու տաղին եւ հայ արուեստի ու մշակոյթի տարբեր արտայայտութեանց մէջ, դարե՛դար....Նարեկացիէն մինչեւ Քուչակ ու Սայեաթ Նովա, Շնորհալի եւ Կոմիտաս, Մեծարենցէն մինչեւ Չարենց ու Թեքէեան...

Հայ մշակոյթին եւ հայ մարդուն միջեւ կապը այնքան սերտ է, այնքան բնական, որքան կապը ծնողքին ու զաւակին միջեւ, եթէ չէ խաթարուած ան, քանզի ժողովուրդը հաւաքականօրէն ծնունդ կու տայ իր մշակոյթին՝ դարերու ընդմէջէն, եւ փոխադարձաբար, անիկա՝ մշակոյթը, իր ամենէն բարձր ձեւերուն մէջ, կը դառնայ հոգեմտաւոր սնունդ ու մանանա, ընդհանրական բարիք, տէրունական հաց ու արին ազգի բոլոր զաւակներուն համար անխտիր....



Ահա թէ ինչու, հայրենի իր բնօրրանէն տարագիր հայը՝ յետ-եղեռնեան տարիներուն յատկապէս, կառչեցաւ իր մշակոյթին, մշակութապահպանութեան սրբազան գործին, իր դպրոցներու ցանցով թէ այլապէս, որպէսզի հողի կորուստով վտանգուած իր հայկականութիւնը կարենար գէթ պահել-պահպանել հայ մշակոյթի աւիշով կենսական: Զուգահեռաբար, Հայաստանի խորհրդային անազատ պայմաններուն տակ նոյնիսկ, հայը կառչեցաւ իր մշակոյթին, հայ գիր ու գիրքին, հայ երգ ու պարին, հայ երաժշտութեան եւ գեղարուեստին, հայօրէն ապրելու, հայօրէն յարատեւելու համար, որպէս ամենէն հզօր երաշխիքն ու գրաւականը հայապահպանութեան եւ հայակերտումի սրբազան նպատակներու կենսագործման....

Առանց հայ մշակոյթի հետ փոխադարձ սերտ կապի, առանց անոր կենսայորդ աւիշին, մենք կը դադրինք հայ ըլլալէ, լուսազոյն պարագային դառնալով ծագումով հայ միայն: Այսօր, երբ Հայկական ցեղասպանութեան մէկդարեայ տարելիցը կը նշենք հաւաքաբար, կ'անդրադառնա՞նք արդեօք այն անհերքելի ճշմարտութեան, որ հողի կորուստէն աւելի ահաւոր է մշակութային կամ ինքնութեան կորուստը, քանզի նոյնիսկ եթէ բաղձալի օր մը, մենք վերանուաճենք բռնագրաւուած Հողը, արդեօ՞ք վերածուած չենք ըլլար անդէմ ու անդիմագիծ փերեզակներու տխուր զանգուածի, եթէ խզած ըլլալով մեր պորտակապը մեր հարազատ մշակութային ինքնութեան հետ, մեր ազգային արմատներուն հետ, դադրած կ'ըլլանք հայուն շարունակական էութեան, հայկականութեան կրողը ըլլալէն, որ կը փոխանցուի սերունդէ-սերունդ հայ մշակոյթի ոգեկան ներարկումով մշտական....եւ, հետեւաբար, ի՞նչ ոգեղէն բովանդակութիւն կրնայ ունենալ, նման պարագային, հայրենեաց հողը...., եթէ անոր հարազատ տէրը պարպուած ըլլայ իր հայկականութենէն:

Նոյն տրամաբանութեամբ ալ, ներկայիս մենք շարունակ եւ իրաւացիօրէն կը խօսինք ու կը գրենք մեր երկրին մէջ տիրող կարգ ու սարքի բարեփոխութեան մասին: Բայց, ազգային պետականութիւնը ճիշդ ուղիի վրայ դնելու համար, կը բաւէ՞ արդեօք ունենալ միայն ժողովրդավար, ազատ, արդար ընտրութիւններ, նոյնիսկ օրէնքի գերակայութիւն, եթէ այնտեղ բացակայ է ազգային մշակութային արժեհամակարգը, քանզի վերջինն է, անտարակոյս, ազգային պետականութեան եւ ազգային հաւաքական կեանքի բուն բովանդակութիւնը, անոր գոյութեան իմաստ ու արժէք պարզեւորը: Անոնց «raison d'etre»ը:

Ազգային պետականութեան համակարգի հիմքերու հիմքը հոգեւոր-բարոյական-մշակութային արժէքներու համակարգն է, որ անշուշտ տեւաբար կը նորոգուի, ներդաշնակուելով ներկայ կեանքի պահանջներուն եւ կարիքներուն հետ, առանց էապէս շեղելու ազգային մեր տեսակը սահմանող հոգեւոր-մշակութային արժէքներէն, իտեալներէն, գաղափարէն....: Այլապէս, անչափ դիւրին է զոհ երթալ՝ ներկայ սպառողական քաղաքակրթութեան դաւանած հակամշակոյթի «արժէքներուն», ազատ շուկայի տնօրինումներուն եւ կորսնցնել ազգային դիմագիծ եւ ինքնութիւն, այսինքն՝ ապահայանալ, համաշխարհայնացման եւ դրամի կայսերապաշտութեան ահեղ յորձանքին անձնատուր....

Դարերու խորքէն, հելլէն մեծ փիլիսոփայ Սոկրատեսի խօսք-պատգամը՝ «Ծանիր Զքեզ»-ը կը հնչէ իր համակ այժմէականութեամբ, հրատապութեամբ: Մենք էական, ճակատագրական կարիքը ունինք այսօր եւ ընդմիջտ ճանչնալու մենք զմեզ, հոգեմտաւոր սնունդ ստանալու



մեր հարազատ մշակոյթի ակունքներէն, փոխադարձաբար զայն նորոգելու, հարստացնելու նորանոր դրսեւորումներով, նորանոր արտայայտութիւններով, սերունդէ-սերունդ անխզելի շարունակականութեամբ: Առանց անոր, մենք կը դադրինք հայ ըլլալէ, եւ, հետեւաբար, իմաստ ու արժէք ալ չունենար ո՛չ հողային Պահանջատիրութիւնը, ո՛չ ալ հզօր ազգային պետականութիւն ունենալու տեսլականը:

Օտարէն մշակոյթ, շատ անգամ հակամշակոյթ մուրալը, զայն կապելն ու նմանակելը հաւասարազօր են ոչ միայն օտարամոլութեան ախտի դրսեւորման, ինքնաճանաչման եւ ինքնագիտակցութեան պակասի, այլեւ հաւասարազօր են ազգային ինքնութեան, ազգային դաւաճանութեան եւ հոսկ՝ ազգային ինքնառնչացման:

Հայ ըլլալը կը պայմանաւորուի հայ մշակոյթով, քանզի Հայ մշակոյթը էապէս հայ հոգիի կրողն է:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ԲԱՅԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ Հայկական Յեղասպանութեան 100-ամեայ Տարելիցի ծիրէն ներս

Հայկական Յեղասպանութեան 100-րդ Տարելիցի ծիրէն ներս, բացառիկ հոգեպարար համերգ մը տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Փալլաս» թատրոնի դահլիճին մէջ՝ Ուրբաթ, 23 Հոկտեմբեր 2015-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, սրահը ծայրէ-ծայր լեցնող երաժշտասէր հայ թէ օտարազգի հասարակութեան հոծ ներկայութեամբ:



Օրուան խորհուրդը, ինչպէս նաեւ կիպրահայ տաղանդաւոր գեղարուեստական ղեկավար, խմբավար Հայկ Բրիւճեանի մասնակցութիւնը ի մի հաւաքեր էին սրտերն ու հոգիները....

Համերգի առաջին իսկ պահէն, մայեսթրօ Հայկ Բրիւճեան՝ իր բարձրահմուտ ղեկավարութեամբ, մագնիսացուց մթնոլորտը, ուր բացառիկ ներդաշնակութեամբ միահիւսուեցան 23 լարային

նուագարաններ՝ ջութակ եւ թաւջութակ, հրամցնելով Richard Strauss-ի Metamorphosen բարդ երկը, որ նախատեսուած է ճիշդ 23 լարային մենակատարողներու համար, եւ ուր կորուստի խորունկ ցաւն ու վիշտը կը միանան ազնուականութեան եւ հոգիի հզօրութեան հետ, այնքա՛ն համահունչ Տարելիցի խորագոյն իմաստին ու խորհուրդին հետ...

Յայտագրի երկորդ մասը ամբողջովին նուիրուեցաւ Մեծ վարդապետ Կոմիտասի (1869-1935) Պատարագին, նախատեսուած լարային գործիքներու համար, որ մշակումն է

ջութակահար, խմբավար Զարեհ Սահակեանցի (1933-1983), կատարուած 1960-ական թուականներուն, ուր ինչպէս կը գրէ Հայկ Իւթիւճեան « ան կը ցուցաբերէ անսխալ ճաշակ եւ զգայնութիւն»....

Տաղանդաւոր խմբավարը՝ մայեսթրօ Հայկ Իւթիւճեան, յայտագրի այս երկրորդ մասի գործադրութենէն առաջ, ներկայ հանրութեան յայտարարեց, որ օրուան խորհուրդի ընդհանուր ծիրէն ներս, 22 Հոկտեմբեր 1935-ը ըլլալով Մեծ վարդապետին եղերական մահուան թուականը, ներկայ Համերգը կը զուգադիպէր անոր մահուան 80-ամեակին, հետեւաբար անիկա նաեւ սրտագին ձօն էր իր Յիշատակին:

Այնուհետեւ, Սուրբ Պատարագի զմայլելի շարականներու լարային կատարումները յաջորդեցին իրար, հմուտ ղեկավարութեամբ մայեսթրօ Հայկ Իւթիւճեանի, մեզ փոխադրելով հայկական հոգեւոր երաժշտութեան ակունքները, ուր հայ հոգին է որ կ'աղօթէ առ Աստուած, վեհօրէն գեղեցիկ, ներքին պարզութեամբ, խորութեամբ, ազնուականութեամբ, բիրեղեայ մաքրութեամբ, այնպէս ինչպէս են մեր տաճարները՝ վեհասլաց, պարզ ու խորունկ....



Շուրջ երեք քառորդ ժամ տեւող հոգեպարար ու հոգեզմայլ շարականներու՝ ամենայն ներդաշնակութեամբ, անթերի վարպետութեամբ եւ զգայնութեամբ հնչող, կատարողութեան ընթացքին, ներկաները խորապէս հաղորդակից դարձան երկնային, հոգեւոր տարածքի վսեմագոյն գեղեցկութեան խորհուրդին հետ, հայ հոգիով շնչաւորուած, հայ հոգիէ բխած...:

Ամբողջովին վերացած, մտովին կը կրկնէի Վազգէն Շուշանեանի անմահական տողերը, որոնք թերեւս լաւագոյնս կ'արտայայտեն այս հիասքանչ կատարողութեան առթած ապրում-յոյզերս...

«Ուրկէ՞ կու գաս, ո՛վ ոսկեայ ու ծիրանեփայլ, ո՛վ խունկէ ու զմուռէ, ո՛վ քաղցրագանգիւն ու տրտմագին շարական: Ո՞ր դարաւոր մագաղաթէն յանկարծ

գրչագրով ու թռչնագրով թելեր առիր ու եկար հոս....»: Հոս՝ Նիկոսիոյ այս դահլիճէն ներս, օրրելու համար մեր տրտմութիւնն ու հոգեւոր ծարաւը...: Այո՛, ո՞ր «հին ու գունատ մատենանէն, ո՞ր կիսակործան այլ փառաւոր վանքէն տարագիր ծիծեռնակի մը թելերուն վրայ սուրացիր, քիչ մը վիրաւոր Հայաստան բերելու համար մեզի...»:

Վստահ եմ, որ մեր անմահական եւ անմահացնող շարականները մշտապէս պիտի գան ու հասնին մեր սիրտերը, բոցավառէն զանոնք, հիացնեն ու լիացնեն մեզ, եթէ կան Հայկ Իւթիւճեանի նման անձինք նուիրեալք, տաղանդաշատ, որոնք մշտապէս, հետեւողականօրէն կը պեղեն հայ հոգիի գանձերը՝ անխոնջ եւ պրպտուն, եւ տարագիր ծիծեռնակի իրենց թելերուն վրայ դրած զանոնք, մեզի կը հրամցնեն, կը վերադարձնեն մեզի

մե՛րը, հոգեւոր արժէքը, հոգեւոր գանձը, որպէս հայեցի լինելութեան մշտավառ ջահ եւ հոգեմտաւոր սնունդ....

Անխոնջ եռա՛նդ ու կորո՛վ քեզի, տաղանդդ եւ նուիրումդ՝ անսպառ, սիրելի մայեսթրօ Հայկ Իրթիճեան:

Երան Գույումճեան

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ «ՆՇԵՆԻՆԵՐ ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ» ՀԱՏՈՐԻՆ

«Մարդկային կեանքի ու մտքի յատկանշական երեւոյթներէն մէկն է յիշողութիւնը, առանց որուն զրկուած պիտի ըլլայինք մենք, մեր ինքնութիւնը կազմող տուեալներէն: Մեր տեսածները, լսածները, յղացումները, գաղափարները, ապրումները, տպաւորութիւնները, ցաւերը, ուրախութիւնները, յաջողութիւնները, ձախողութիւնները եւ տակաւին շատ մը այլ երեւոյթներ, երկար շարանը կը կազմեն մեր յիշողութեան, իմաստը՝ մեր ինքնութեան: Յիշողութիւնը որքան որ մթերքն է մեր անցեալի հոլովոյթներուն, նոյնքան եւ սնունդն է մեր ներկայի եւ հարկաւ ապագայի ուղղութեան: Կեանքը՝ այլաբանօրէն, իբրեւ նշենի, շարժում մըն է արտաքին իր բոլոր երեւոյթներով: Կը ծլի, կը ծաղկի, կ'ուռճանայ, կը պտղաւորուի ու կը դառնայ ձգտո՛ւմ, ծրագի՛ր՝ դէպի կատարելագործո՛ւմ, իր ներքին էութեամբ, իբրեւ խորհրդանշական ճամբորդութիւն դէպի ապագան»:



Այս դիպուկ եւ իմաստալից տողերը արձանագրած է Վարդան Թաշճեան իր «Նշենիներ Յուշերու Շարքէն» գիրքի ներածական խօսքին մէջ, քանզի իրաւամբ ալ յիշողութիւնը կեանքի մը համակ փորձառութիւնն է, որուն պատումին ընդմէջէն, հեղինակը ընթերցողին կը փոխանցէ անպայմանօրէն ըսելիք մը, պատգամ մը, խրատ մը...

«Նշենիներ Յուշերու Շարքէն» հատորի շնորհահանդէսը տեղի ունեցաւ Չորեքշաբթի 4 Նոյեմբեր, 2015-ին, կ.ե. ժամը 7:00-ին, Առաջնորդարանի «Վահրամ Իրթիճեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Նարեկ Արք. Ալեմեգեանի եւ նախագահութեամբ կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի, ներկայութեամբ ազգային-երեսփոխանական, վարչական, կրթական եւ այլ մարմինները ներկայացնող ազգայիններէ, մամլոյ ներկայացուցիչներէ եւ գրասէր հոծ հասարակութեան մը:

Իր բացման խօսքին մէջ, գիրքի հրատարակիչ Պրն. Եղիա Գայայեան անդրադարձաւ հայ գիրքի անցած երկար եւ փոթորկալից ճանապարհին, ձեռագիր մատեաններու ստեղծումէն մինչեւ ներկայիս գիրքերու հրատարակութիւնը: «Հետեւողականութիւն,

նախանձախնդրութիւն, անսահման համբերութիւն եւ աշխատանք կ'ենթադրէ գիրքի մը պատրաստութիւնը, իսկ հրատարակութիւնը՝ նիւթական միջոցներ եւ կամ հովանաւորներ, որոնց թիւը, դժբախտաբար, օրըստօրէ կը պակսի, հետեւաբար, գիրքերու հրատարակութիւնն ալ սկսած է կաղալ», ըսաւ ան, նշելով նաեւ այս հարցին հետ սերտօրէն առնչակից՝ հայ դպրոցներու փակման, հայ խօսք ու գիրքի նահանջի տխուր պարագաները: Այս ենթահողին վրայ, մասնաւորաբար, ան արժեւորեց Վարդան Թաշճեանի «Նշենիներ Յուշերու Շարքէն» գիրքի լոյս ընծայումը, «190 էջերէ բաղկացած, համ ու բոյր ունեցող, աղ ու հաց պարունակող յուշերու հատորը, պատկերազարդ եւ բովանդակալից գիրքը»:

Տիկ. Սօսի Թորոսեան ապրումով եւ յստակ առողջանութեամբ կարդաց հատուածներ գիրքէն, ճաշակ մը փոխանցելով գիրքի բովանդակութենէն, ներկաները հոգեպէս փոխադրելով յուշերու աշխարհը, երբեմնի Մելգոնեան կրթական հաստատութիւն, Նարեկ վարժարան..., վաղուց հեռացած կամ դեռեւս ապրող մարդկանց մտերմութեան մէջ....

Այնուհետեւ, խօսք առաւ Նարեկ Արքեպիսկոպոս, որ գիրքի մասնայատկութիւնը ուրուագծեց հետեւեալ բառերով. «Կեանք, լաւատեսութիւն, սրամտութիւն, անցեալի փառքի, ներկայի մարտահրաւերներու եւ ապագայի պրկումի ագուցում, անմիջականութիւն, Ս.



Աստուածածին Մայր Եկեղեցի, Մելգոնեան եւ Նարեկ Վարժարան, մեծերու հետ շփում, տպաւորապաշտ էջեր»: Ան իր կարճ բայց խորիմաստ խօսքը եզրափակեց ըսելով. « Այս գիրքով (ան) կարծեք իրեն յատուկ ոճով, խնդրով եւ իրապաշտութեամբ, արուեստագէտի բազմատաղանդ խառնուածքով կեանքը կը վրձինէ մեր դիմաց: Բոլորիս կը մնայ

մաղթել, որ Աստուած քաջառողջութիւն պարգեւէ Վարդանին, որպէսզի հեղինակին անտիպ գործերը շուտով լոյս տեսնեն: Մինչ այդ մօտենանք հեղինակին, ջերմօրէն շնորհաւորենք զինք այս հատորին հրատարակութեան առթիւ եւ վայելենք կեանք-նշենիին վարդանեան համով-հոտով պատգամը: Կը մաղթենք, որ Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ հայ մշակոյթի մեր բոլոր մեծերուն օրհնութիւնը անպակաս ըլլայ Վարդանին վրայէն»:

Գինեձօնի աւանդական արարողութիւնը կատարուեցաւ՝ Ս. Թարգմանչաց նուիրուած հոգեպարար շարականի երգեցողութեամբ, Նարեկ Արքեպիսկոպոսի, Տէր Մովսիկ եւ Տէր Մաշտոց քահանայ Հայրերու կողմէ, մասնակցութեամբ Տիար Վարդգէս Մահտեսեանի եւ գիրքի հեղինակ Տիար Վարդան Թաշճեանի:

Ի վերջոյ, խօսք առաւ հեղինակը՝ բազմամեայ կրթական մշակ, Նարեկ վարժարաններու երբեմնի վաստակաշատ տնօրէն, արուեստագէտ Պրն. Վարդան Թաշճեան, որ իր շնորհակալութեան խօսքէն ետք պատկան անձանց, ան յատկապէս ըսաւ. «Այս գիրքը

ինքնակենսագրութիւն մը չէ, այլ պարզապէս յուշերու շարք մը, ինչպէս կ'ըսէ խորագիրը: Յուշեր, կեանքի էջեր, դրուագներ Մելգոնեանէն, Լիբանանէն, Նարեկ վարժարանէն, որոնք կրթական ասպարէզիս երեք կայանները եղան, ինչպէս նաեւ յուշեր՝ գեղարուեստական կեանքէս, որ դեռ կը շարունակէ փայփայել եւ իմաստաւորել ժամանակս, փառք Աստուծոյ»:

Իր հարուստ կենսագրութեան անդրադառնալով, ան կարեւորութեամբ նշեց. «Սորվեցայ եւ փորձեցի սորվեցնել որ զուարթամտութիւնը, անկեղծութիւնը, ճշմարտախօսութիւնը, համեստութիւնը, ուղղամտութիւնը, դրական ոգին, արդարադատութիւնը գէնքեր ունենալով՝ կարելի է դիմակայել, յաղթահարել տեսակաւոր դժուարութիւններ, մարտահրաւերներ, հիասթափութիւններ եւ յուսախաբութիւններ»:



Ան սրտանց մաղթեց որ այս գիրքը հասնի մանաւանդ մեր երիտասարդութեան, անոնց մօտ արթնցնէ մարդասիրական ոգի, աննիւթական եւ աննախանձ նկարագրի ընկալումով, ըլլայ բարոյական ոգիի զարթում մը, կամքի եւ վճռակամութեան պոռթկում մը: Եւ աւելցուց. «Կը մաղթեմ որ մեծ մասամբ զուարթութիւն հրամցնող գրքիս այս գրութիւններէն առթուած ժպիտը անթառամ կը մնայ բոլորիդ դէմքին վրայ, ձեր եւս յուշերու շարքին մէջ»: Հուսկ, ան իր վերջին շնորհակալութեան խօսքն ուղղեց բոլոր այն հոգիներուն, որոնք կային ու ա՛լ չկան...եւ յուզումով աւելցուց. «Այս գիրքը իմ երախտագիտութիւնս թող ըլլայ, իրենց յիշատակը անթառամ պահող եւ զիրենք վերստին կեանքի կոչող տուրք մը, յարգանքի եւ սիրոյ ծաղկեփունջ մը»:

Հեղինակը իր գեղեցիկ ձեռագիրով մակագրեց վաճառուած բոլոր գիրքերը, որոնց հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի Նարեկ վարժարաններու կարիքաւոր աշակերտներու ֆոնտին:

«Նշենիներ Յուշերու Շարքէն» գիրքի լոյս ընծայման առթիւ, սրտանց կը շնորհաւորենք հեղինակը՝ Վարդան Թաշճեանը, իրեն մաղթելով ստեղծագործական անմար եռանդ ու կորով, գրական-գեղարուեստական նոր երկերու մտայղացում եւ լոյսին ընծայում եւ նորանոր յաջողութիւններ:

Երան Գույումճեան

Տեսակէտ

«Սփիւռք» – Համասփիւռքեան Հիմնադրամ

Գրեց՝ ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ



Խորագրին ի տես, շատեր պիտի պոստեն իրենց յօնքերը, ու՝

– Ի՛նչ համասփիւռքեան հիմնադրամ...

Այո՛,

Եթէ «Հայաստան» համահայկական հիմնադրամ,

Ուրեմն,

Նաե՛ւ՝ «Սփիւռք» համասփիւռքեան հիմնադրամ:

Ի՞նչն է տարօրինակը, եւ ինչո՞ւ է զարմանքը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ծնունդ առաւ Հայաստանի անմիջական կարիքներուն հասնելու: Ան ուներ ե՛ւ ազգային-հասարակական նպատակ՝ սփիւռքի աչքերը սեւեռել՝ Հայաստանի վրայ:

Հարցումը.

Սփիւռքը չունի՞ կարիքներ, որոնք համասփիւռքեան օժանդակութեան կը սպասեն: Ու ժամանակը չէ՞, որ սփիւռքը իր աչքերը սեւեռէ սփիւռքի վրայ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը խանդավառեց նախագահ Սերժ Սարգսեանը, որ հրապարակ նետէ «հայաստանակեդրոն սփիւռք» լոգունգը: Տարագումը ծայրայեղ էր ու վտանգաւոր: Նախագահը աւելի ուշ անդրադարձաւ իրողութեան ու փորձեց յղկել տարագումին սուր անկիւնները: Փորձը անյաջող էր: Իրականութիւնը կը մնայ այն, որ կամայ թէ ակամայ, «հայաստանակեդրոն սփիւռք» լոգունգը ամէն օր քիչ մը աւելի կը խթանէ սփիւռքի ինքնամոռացումը:

Եւ հոս պիտի ճշդել՝ սփիւռքակեդրոն սփիւռք մը միայն կրնայ հայաստանակեդրոն սփիւռք ըլլալ:

Քանի որ ինքնամոռաց սփիւռք մը հուսկ կը կորսնցնէ ե՛ւ Հայաստանի հասցէն, ե՛ւ ճամբան:

Գիտակի՞ց ենք ինքնամոռացութեան ճամբայ հարթող սփիւռքին սպասող վաղուան օրերու բնոյթին:

Ահա թէ ինչո՞ւ արշակաւանեան խառնարանի այս օրերուն, ժամանակն է, որ սփիւռքը կանգ առնէ պահ մը, կենայ հայելիին դիմաց ու հարց տայ.



– Ո՞վ եմ ես, ինչո՞ւ եմ սփիւռք, ուրկե՞ կու գամ, ո՞ւր կ'երթամ, ինչո՞ւ կ'երթամ, ի՞նչ է եւ ո՞ւր է վախճանակետը...

Հրամայական պահանջ է, որ տրուին այս հարցումները ու կատարուի պատասխաններուն փնտռտուքը: Ու երբ կը տարագուին պատասխանները, հարց պիտի տալ:

– Համաշխարհայնացումի սաղայելական քարոզչութեան այս օրերու արշակաւանեան խառնարանին մէջ սփիւռքը ունի՞ ազգային պայքարի մէկ ամբողջական ինքնավար նպատակ ու մէկ ամբողջական գործակցութիւն՝ նա՛խ սփիւռքի, եւ ապա՝ Հայաստանի համար:

Սփիւռքակեդրոն սփիւռք մը ունենալու գործնական առաջին քայլը պիտի ըլլայ համասփիւռքեան կեդրոնական ժողովի մը գոյառումը:

Աւելի քան կէս դար է ու մինչեւ այսօր կը գրուի ու կը խօսուի այս մասին, ու դժբախտաբար աւելի քան կէս դար է ու մինչեւ այսօր ան դեմ կու գայ բազմադէմ կարծրատիպ մտածողութիւններու պատին:

Եթէ Յեղասպանութեան զոհ տարագիր հայութիւնը՝ սփիւռքը, Հայ դատի իրաւատէրն է ու իր բռնագրաւուած հայրենի հողերուն պահանջատէրը, ապա ուրեմն համասփիւռքեան կեդրոնական ժողովը միակ գրաւականն է իր իրաւական ներկայութեան ու կատարուած քարոզչութեան իրաւութեան հաւաստիքը:

Համասփիւռքեան կեդրոնական ժողովի մը կազմաւորումին համար մարդը չէ, որ կը պակսի: Սփիւռքը որակեալ մասնագէտներու փաղանգ մը կրնայ ոտքի հանել, որ գերագոյն արժանապատուութեամբ ու պատասխանատուութեամբ կարենայ համասփիւռքեան կեդրոնական ժողովը դնել աշխատանքային ճիշդ հունի մէջ ու լիազօրուած հեղինակութեամբ հետապնդել պահանջատիրութեան դատը:

Այս օրերուն Յեղասպանութեան նուիրուած գիտաժողովներուն հիմնախնդիրն է պահանջատիրութեան դատի իրաւական երեսը: Տեսականօրէն, թուղթի վրայ, շատ բան կարելի է պարզել, մինչեւ իսկ բոլոր դատերը շահիլ, բայց... երբ կու գայ ժամանակը՝ թղթածրարները ձեռքին միջազգային ատեաններ ներկայանալու, ո՞վ հաշուարկած է, թէ քանի՞ միլիոն տոլարի կամ եւրոյի նախահաշիւ ելեւմտավարկ պէտք է պատրաստուի: Ժամանակի գործօնը:

Հարիւրամեակը նոր հարիւրամեակի սեմին կը բերէ Հայ դատն ու պահանջատիրութիւնը: Այս է իրողութիւնը, զոր պիտի դիմագրաւել համբերութեամբ ու հաշուենկատումով: Կը նշանակէ՝ նոր հարիւրամեակ մը պիտի նախատեսել պահանջատիրութեան պայքարի ճանապարհին, ու այդ ճանապարհին վրայ՝ իրերայաջորդ սփիւռքահայ նոր սերունդներու ասպարէզ գալը:

Եւ հոս՝ վերադարձ հիմնահարցին:



Եթէ նոր հարիւրամեակի իրերայաջորդ սփիւռքահայ սերունդները պիտի ստանձնեն պահանջատիրութեան դատն ու անոր հետապնդումը, ապա առաջնահերթ պարտաւորութիւն է այդ սերունդներուն ազգային դաստիարակութիւնը, հայերէնով հայեցի դաստիարակութիւնը, եթէ երբեք կը հաւատանք, որ՝

Լեզուն հաստատագիրն է ազգային դիմագիծին եւ ինքնութեան:

Ուրեմն հայ դպրոցը պիտի մնայ կիզակէտը սփիւռքի ուշադրութեան, նախանձախնդիր անոր յարատեւ վերանորոգման ու բարգաւաճումին ե՛ւ ուսումնական, ե՛ւ կրթական, ե՛ւ ազգային, ե՛ւ քաղաքացիական մակարդակներու վրայ:

Հայ դպրոցը, որ նշանակէ՝

Հայ աշակերտ եւ ուսանող, հայ ուսուցիչ ու դասախօս, հայ տնօրէն ու վարչական կազմ:

Եւ այսօր ի՞նչ է հայ դպրոցին վիճակուած ճակատագիրը: Աղքատախնամի պնակ: Զբանանք փակագիծերը, սակայն ըսենք, որ մերօրեայ հայ դպրոցը իր գոյութիւնը կը քաշկոտէ հովանաւոր եկեղեցիներու կամ կազմակերպութիւններու՝ անհասանելի պահանջներուն հասնելու շփոթահար ճիգով, սակաւաթիւ բարերարներու առատաձեռն նուիրատուութեամբ, ու յաճախ՝ բարիկամեցողներու սրտաբուխ նուէրներով:

Ինչո՞ւ կը փակուին հայ դպրոցները: Կամ՝ կը փակենք: Գաղտնիք չէ. փերեզակային հոգեբանութեամբ «մեծանուն տնտեսագէտներ» ունինք, որոնք միշտ ալ հայ դպրոցի մը ելեւմտավարկի արձանագրած «բաց»-ը գոցելու հանճարեղ առաջարկը ունին.

– Փակեցէ՛ք դպրոցը:

«Հանճարեղ» այս տնտեսագէտները կը գիտակցի՞ն, թէ՝

Սփիւռքի մէջ հայ դպրոց մը փակել՝ համագոր է Հայաստանի մէջ զօրանոց մը փակելու:

Կարո՞ղ ենք ճիշդ գնահատել այս հաւասարութիւնը:

Միայն Լիբանանի ու Սուրիոյ (մանաւա՛նդ այս օրերուն) մէջ չէ, որ հայ դպրոցը նիւթական տագնապ կը դիմագրաւէ: Հարց տուա՞ծ ենք, թէ ի՞նչ է Յունաստանի եւ Կ. Պոլսոյ հայ դպրոցին տնտեսական կացութիւնը: Ու զարմանքով հարց պիտի տալ թէ ինչո՞ւ Միացեալ Նահանգներու հայաւիտ «Լոս Արմենոս»-ի մէջ հայ դպրոց կը փակուի... նիւթական պատճառներով:

Ու դեռ պիտի զարմանալ, թէ ինչո՞ւ Նիւ Եորքի մէջ 2011 թ. կարելի կ'ըլլայ ստեղծել վեց միլիոն տոլարի անձեռնմխելի հիմնադրամ մը (որուն մէկ միլիոնը ՀԲԸ միութեան «կրթաթոշակներու ֆոնտ»-էն), «Էջմիածնի միաբանութեան մէջ եկեղեցականներու պատրաստութեան եւ բարձրագոյն կրթութեան համար», բայց նոյն նուիրատուները, որոնք մեծամասնութեամբ Միջին Արեւելքի զաւակներ են՝ Նոր Աշխարհ տեղափոխուած, չե՛ն կրնար մտածել նմանօրինակ հիմնադրամ մը ստեղծելու մասին, իրենց դռները փակելու սպառնալիքին առաջ կեցած Միջին Արեւելքի հայ դպրոցներուն համար:



Ու պիտի զարմանալ, թէ ինչպէ՛ս նոյն տարուան մէջ իր պորտը հայութենէ կտրած «ծնունդով (կէս) հայ»-ը, մեծահարուստ թենիսիստ Անտրէ Ադասի կը յաջողի իր կնքահայրէն՝ «աշխարհի ամենէն հարուստ հայէն»՝ Գըրգ Գըրգորեանէն, տասնութ միլիոն տոլար ձեռք բերել իր թենիսի դպրոցին համար, բայց ամերիկահայութիւնը իր եկեղեցիով ու կրթական համակարգով չի կարողանար հայ դպրոցի գոյատեւման համար համոզել Գըրգ Գըրգորեանը, որ գէթ տասը միլիոն տոլար գումարով հիմնադրամ մը հաստատէ:

Դեռ այս «հի՛շ», աշխարհի ամենէն հարուստ նոյն հայը, նոյն տարուան մէջ երկու հարիւր միլիոն տոլար կը նուիրէ Լոս Անճելըսի Քալիֆօրնիոյ համալսարանին:... Եւ ո՞վ հարցուց, թէ որո՞ւ ժառանգ կը մնան Գըրգ Գրիգորեանի միլիառները...

Արդեօ՞ք պիտի մտածել, թէ սփիւռքահայը ի՛նք ալ սկսեր է հաւատալ Հայաստանէն «ձայնասփռուած» քարոզչութեան, թէ՛ «Սփիւռքի մէջ աղքատ հայ չկայ»: Ինչո՞ւ զարմանալ, երբ հրապարակագիր մը կը գրէ. «... ունեւոր էին, ինչպէս բոլոր հայերը արտասահմանում»: Իսկ հանրածանօթ գրող մը կ'արձանագրէ. «Ես աղքատ սփիւռքահայ չեմ տեսել...»: Այս ի՛նչ հրաշք ու երջանկութիւն (բայց այս մասին՝ այլ առիթով):

Սփիւռքի հայ համայնքները կը նահանջեն, կ'ուծանան, կ'ապագայնանան գլխաւորաբար նաեւ համայնքներու տնտեսական կեանքին համբալ ու ձախաւեր դեկաւարութեան պատճառով: Ամէն Ինչ «օր օրի » է, ամէն ինչ կարկտան, ամէն ինչ «այսօրը անցընենք» հոգեբանութեամբ: Տնտեսական ազգային հզօր կառոյցներ չկան, գլխաւոր պատճառը անվստահութեան հարցն է: Հայու խասիաթ է, ամէն ոք միայն ի՛նք պիտի նախաձեռնէ եւ ի՛նք կառավարէ: Չըլլա՛յ, որ հաւաքական աշխատանք մը հրապարակի վրայ արդիւնաւորութիւն ու հեղինակութեան տիրանայ. ի՞նչպէ՛ս թէ, հապա՞մեր «ես»-երն ու «եսիկ»-ները:

Հինցած ոճերու ստրուկն է սփիւռքը: Ու հինցած ոճերը ծուլութեան կ'առաջնորդեն, կը յոգնեցնեն ու կ'ուծացնեն: Հինցած ոճերու զոհերն են հայ դպրոցները, ընկերային ու հասարակական կազմակերպութիւնները, հայ ազգային կուսակցութիւնները, հայ եկեղեցիները:

Ու ոճը չի նորանար մարդերու փոփոխութեամբ կամ տեղափոխութեամբ, ո՛չ ալ՝ արհեստագիտական սարքաւորումներով: Ոճը կը նորանայ մտքի ու մտայնութեան նորանալով, նոր հորիզոններու դիմաց քննադատական մտածողութիւնը սկզբունք ու մեկնակէտ որդեգրելով:

Ու որպէսզի իրականանայ նորանալը, անհրաժեշտ է ստեղծումը մտածողներու խորհուրդին կամ հիմնարկին (think tank): Մտաւորական եւ ուսումնական բարձրագոյն մակարդակով, ասպարէզային տարբեր մարդերու մէջ փորձառու մասնագէտներու խորհուրդ մը, որ համապարփակ գնահատանքը կատարէ սփիւռքի ներկայ իրավիճակին, ու նոր հեռանկարներու համար նորաոճ աշխատանքի ծրագիր մը յանձնէ համասփիւռքեան կեդրոնական ժողովին:

Աշխատանքային բազմաթիւ ծրագիրներ իրականացնելու համար՝ պահանջատիրութեան դատ, հայ դպրոց, հայ մշակոյթ, մամուլ-քարոզչական մեքենայ, առողջապահական-



ընկերային ծառայություն – մշակուած ծրագիրներու դիմաց՝ առաջնահերթ պահանջը դրամն է, եւ ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է մտածել «Սփիւռք» – համասփիւռքեան հիմնադրամի մասին:

Յիսնամեակ մը առաջ երկար խօսուեցաւ ու գրուեցաւ հայկական դրամատան մը ու հայկական հիւանդանոցի մը մասին: Կար ցանկութիւնը, ու երկար տեւեց գիրն ու խօսքը: Միայն գիրն ու խօսքը: Կար նախօրինակը. 1911 թ. Կ. Պոլսոյ մէջ հիմնուած էր հայկական դրամատուն մը, որուն առաջին հերթին դիմում կը կատարուէր 1914 թ. բռնկած պատերազմի զոհերուն օգնութեան փութալու:

Սփիւռքի միատարրութիւնը իբրեւ ազգային հաւաքականութիւն ամրագրելու ու կեդրոնաձիգ աշխատանքը իմաստաւորելու համար անյետաձգելի անհրաժեշտութիւն համասփիւռքեան կեդրոնական ժողովը եւ «Սփիւռք» համասփիւռքեան հիմնադրամը:

«Սփիւռք» համասփիւռքեան հիմնադրամը կը գործէ բարոյական հովանաւորութեան ներքեւ երեք հոգեւոր պետերուն՝ դէկավարութեամբ անկախ գործադիր ժողովի մը, որ համարատու է համասփիւռքեան կեդրոնական ժողովին: Վստահութիւնը մեծագոյն դրամագլուխն է:

«Սփիւռք» համասփիւռքեան հիմնադրամը «Հայաստան» համահայկական հիմնադրամին հակադրուելու համար չէ: Բայց արդար ըլլանք ու հարց տանք. «Հայաստան» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ հիմնադրամը վերջին քանի տասնեակ տարիներուն սփիւռքէն (չհաշուած Ռուսիան) հանգանակած միլիոններէն քանի՞ դահեկանի նպաստ հասցուցած է սփիւռքին: Քաջ ըլլանք խոստովանելու, թէ վերջին երեք տարիներուն «Հայաստան» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ հիմնադրամը դրամական (հաշուելով վերջին դահեկանը) ի՞նչ աջակցութիւն ցուցաբերած է սուրիահայութեան:

Դարձնենք էջը ու հարց տանք տարագիր սփիւռքահայութեան եկեղեցի, բարեգործական ընկերակցութիւններ, կուսակցութիւններ, անհատ բարերարներ, ու պատասխանը սպասենք իրմէ.

– Առանց դոյզն իսկ չափով թերագնահատելու Հայաստանի եւ Արցախի կարիքները, ու միշտ ջատագով այդ կարիքները բառնալու աշխատանքին՝

– Հայաստանի ու Արցախի մէջ դպրոցները վերանորոգուելու կարիքը ունին, սփիւռքի մէջ չունի՞ն...

– Հայաստանի ու Արցախի մէջ չքաւոր հայը չքաւոր է, սփիւռքի մէջ չքաւոր հայը չքաւոր չէ՞ ...

– Հայաստանի ու Արցախի մէջ եթէ հիւանդանոցները անհրաժեշտ է օժտել գերարդիական սարքերով, սփիւռքի բարեգործական դարմանատուները կարիքը չունի՞ն բարենորոգման՝ ձեռք մը աւելի տալու հայ հիւանդին:

– Հապա՞ հիւանդները... Հայաստանի ու Արցախի մէջ հայը արժանի է (եւ արժանի՛ է) յաւետ վերանորոգուող հիւանդանոցներու մէջ ամենէն նպաստաւոր պայմաններով բուժում ստանալու, իսկ սփիւռքի մէջ՝ դռնէ դուռ մուրալո՞ւ...



Տակաւին չբանանք էջը տնագուրկ հայերու, հայ դպրոցէ զրկուած (դրամի պատճառով ձրիավարժ պետական դպրոց յաճախող) հայ աշակերտներու, եւ ընդհանրապէս տնտեսական տագնապի պատճառով դպրոցէ զրկուած հայ տղոց:

Եւ հարց տանք, թէ հայկական քանի՞ դպրոցներու մէջ քանի՞ ուսուցիչներ քանի՞ ամիս է, որ աշխատավարձ չեն ստացած...

Դեռ չխօսինք իւրաքանչիւր հայ դպրոցի կոնակին բեռցուած պարտքի քանակի մասին, որ ի վերջոյ կրնայ հրամայել դպրոցին դուռը փակել:

Ո՞վ է ամչցողը, երբ հայկական ձայնասփիւռները եւ օրաթերթերը կոչ կ'ուղղեն հայ հիւանդի մը վիրահատութեան կամ հիւանդանոցային բուժման համար դրամ հանգանակելու:

Ո՞վ հարց տուաւ, թէ ինչո՞ւ շատ մօտիկ անցեալին Պէյրութի մէջ հայ դպրութեան ծառայող մը գրեթէ անօթի մահացաւ:

Ե՞րբ եւ ո՞ւր վերջ կը գտնէ այս անտիրութիւնը:

«Սփիւռք», համասփիւռքեան հիմնադրամը պերճանք չէ, այլ՝ հրամայական անհրաժեշտութիւն:

Ի վերջոյ պիտի մտածենք սփիւռքահայու արժանապատուութեան մասին, թէ՞ ոչ:

Ի՞նչ կը մտածեն Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն հրապարակ իջած եղերամայրերը յիշեցնող մերօրեայ եղերամայրերը, երբ կը կարդան, թէ վիրաւոր հալէպահայութիւնը բացած է իր դպրոցներուն դռները:

Հարցումը.

Ո՞վ բաց պիտի պահէ այդ դպրոցներուն դռները:

Ճառերէն մնացինք յոգնած ու սոված:

Ե՞րբ կ'առնուին սփիւռքը իր պատմական առաքելութեան համար փրկելու համասփիւռքեան առաջին քայլերը, որոնց իրաւութեան հաւաստիքը պիտի ըլլայ համասփիւռքեան կեդրոնական ժողովի ստեղծումը, մտածողներու խորհուրդին կեանքի կոչումը եւ «Սփիւռք» համասփիւռքեան հիմնադրամին հիմնումը:

Պիտի փրկել սփիւռքը՝ հրաւիրելով զայն ինքնաճանաչումի, ինքնագիտակցութեան եւ ինքնարժեւորումի՝ ամրապնդուելու, պատասխանատուութիւն բառնալու եւ բարոյապէս, մտաւորապէս ու նիւթապէս արտադրող հզօր մեքենայ դառնալու:

Եթէ հզօր «Հայաստանը պայմանաւորուած է հզօր սփիւռքով»,

Ու եթէ Հայաստան կը հաւատայ իր իսկ հրապարակած այս լոգունգին, ապա ուրեմն պարտաւոր է դրապէս դիմաւորելու սփիւռքի մէկտեղման (արդէն «սփիւռքներ» յուսալքող



տարագումը սկսեր է երեւալ հրապարակագրութեան մէջ), վերականգնման ու հզօրացման համար նախապայման եղող վերոյիշեալ անկախ կառոյցներու գոյառումը:

Կառոյցները՝

Համասփիւրքեան կեդրոնական ժողով,

Մտածողներու խորհուրդ կամ հիմնարկ.

«Սփիւրք» համասփիւրքեան հիմնադրամ:

Կրկնէնք.

«Եթէ «Հայաստանակեդրոն սփիւրք»,

Ապա ուրեմն նախ՝

սփիւրքակեդրոն սփիւրք:

24 Հոկտեմբեր 2015

Հայ Ուսուցիչները Եւ «Նոր Մոտան»

Դոկտ. Մինաս Գոճայեան,

Լոս Անճելըս, 29 Յուլիս 2015

Իմ նախորդ գրութեանս մէջ դիտարկումներս, խոհերս ու մտահոգութիւններս արտայայտած



էի հայ դպրոցներու «մոտայիկ»ութեան մասին (*): Ներկայ գրութեամբ թուղթին կը յանձնեմ խոհերս հայոց լեզու եւ այլ առարկաներ դասաւանդող լաւ ու արհեստավարժ հայ ուսուցիչներու պարագան:

Գուցէ աւելի գործնական պիտի ըլլար եթէ անգլերէն արտայայտուէի այս նիւթերու շուրջ, որովհետեւ հայոց լեզուի նորոյթն ալ անցնելու վրայ է կարծես կամ արդէն

անցած է՝ կրթական ասպարեզէն ներս վարչական-հոգաբարձական պարտականութիւններ ստանձնած բազմաթիւ անձերու համար: Հետեւաբար, անհաւանական չէ, եթէ հետագային հայերէնով չարտայայտուիմ այս մասին:

Տասնամեակներ առաջ, երբ որպէս նորակոչ ուսուցիչ հայոց լեզուի ու գրականութեան ՀԲԸՄ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ՝ վկայեալ Երեւանի Պետական Համալսարանէն



Մագիստրոսի ու Դոկտորայի տիտղոսներով, աշխատավարձի նուազագոյն յաւելումի մը առթիւ սկսած բանակցութեանց ընթացքին ի մէջ հայ, օտար եւ հոգաբարձական կազմի անդամներուն, պատկառելի անդամ մը ուղղակի ըսաւ բորբոքած երանգով. «Եթէ չէք ուզեր մեր տուածով բաւականանալ, կրնաք ձգել եւ այլ ասպարէզներու մէջ մտնել, եթէ պէտք ըլլայ եւ հիմա հարիւր հատ հայերէնի ուսուցիչ կը բերեմ Լիբանանէն 100 սթերլինի...» (կարծես 100 ձմերուկ կամ սեխի պէս ապրանքներ էին ներմուծուելիքները): Այդ պահուն եւ, երիտասարդ ու արժանապատուութիւն ունեցող քիչ մը տաքարիւն ուսուցիչս, բորբոքած ոտքի ելայ եւ ըսի. «Գացէք գտէք. այսօրուրնէ իսկ կրնաք զիս արձակել աշխատանքէ...», ու դուրս ելայ ժողովէն: Երանի՛ թէ այն ատեն զիս գործէ արձակէին, որովհետեւ այսօր թերեւս այլ ասպարէզի մէջ յայտնուէի ու հետագային չկլլէի դառն դեղահատերը հայերէնի ուսուցիչ ըլլալու: Թէեւ ըսեմ որ հոգեկան մեծ բաւարարութիւն ալ ստացած եմ հայերէնի ուսուցիչ ըլլալով թէ՛ ՄԿՀ-ի եւ թէ՛ ԱՄՆ-ի մէջ՝ շնորհիւ ուսումնատենչ ու տեսիլք ունեցող աշակերտներու:

Մեզմէ՛ հայերէնի ուսուցիչ-ուսուցչուհիներէս վիթխարի արդիւնքներ կը սպասեն, երբեմն ալ հրաշքի համագօր բաներ՝ նուազագոյն վարձատրութեամբ: Սպասողներն են մեր տնօրէնները, մանկավարժական խորհուրդներու, յանձնախումբերու, կրթական մարմիններու եւ հոգաբարձական կազմերու ստուար թիւով սրտցա՛ւ անդամները: Իրաւունք ունին, ի հարկէ, հապա ինչո՞ւ համար այսքան գոհողութիւններ կը կատարուին...: Ծնողներ իրենց կարգին մեզմէ կը սպասեն որ իրենց մատոյշով զաւակները հայերէնը սիրեն, սիրելով հայերէն սորվին, I hate Armenian չըսեն, շատ տնային պարտականութիւններով չխճողուին իրենց գլուխները, շատ անձանօթ բառեր չյանձնարարուին սորվելու (՛), ինչպէս օրինակ՝ հողաթափ, ինքնաշարժ, համակարգիչ, երթելեկութիւն, գնումի երթալ եւ այլն (չ՛է որ «ե՞րբ պիտի գործածեն այդ բառերը» պատճառաբանութիւնը միշտ պատրատ է...):

Անգլերէն, ընկերային գիտութիւններ, գիտական առարկաներ դասաւանդող հայ ուսուցիչներուս անձնոյր աշխատանքին ծնողներ (եւ կրթական յանձնախումբերու անդամներ) կը հետեւին գերարդիական խոշորացոյցերով, մանաւանդ եթէ իրենց երախան իրենց ցանկացած նիշը չստանար այդ առարկաներուն մէջ: Ականատես եղած եմ դէպքերու, երբ այս երկրին մէջ գրեթէ մեծցած եւ անգլերէնին կամ իր մասնագիտութեան մէջ լաւ համալսարանէ մը վկայեալ հայ ուսուցիչին մէջ փնտռած են խոցելի կէտեր: Ըսած են. «Այսինչեանը accent ունի. եւ չեմ ուզեր իմ զաւակս accent-ով խօսի», մինչդեռ անտեղի կերպով տրտնջացող ծնողքը տունը յամառօրէն անգլերէն կը խօսի իր զաւակներուն հետ... ոչ-ամերիկեան accent-ներով:

Քիչ չէ թիւը այն ուսուցիչներու, որոնք այս եւ այլ պատճառներէ դրդուած ձգած հեռացած են հայկական վարժարաններէ: Կը ցաւիմ որ կորսնցնողը մեր հայկական վարժարանները կ'ըլլան, որովհետեւ այդ «չհանուած» ու իբր թէ խոցելի կէտեր ունեցող մեր հատուկէնտ ուսուցիչ- ուսուցչուհիները երբ լքած են իրենց պաշտօնավարած հայկական վարժարանները (ոմանք այդ նոյն վարժարաններէն շրջանաւարտ), շուտով սիրուած են իրենց պաշտօնավարած նոր օտար դպրոցներուն մէջ, աւելի՛ շատ գնահատուած են օտար ծնողներու կողմէ եւ շուտով ալ ստացած են արդար ու արժանապատիւ աշխատավարձեր:



Օրինակ մը տալու համար (անունները զանց կ'ընեմ)՝ վերջերս մանկավարժական տիպար պատրաստութիւն ունեցող ու վկայեալ մասնագէտ ուսուցչուհի մը, որ կը տիրապետէ հայերէն եւ անգլերէն լեզուներու, կրնար յաջող կերպով ստանձնել իր իսկ շրջանաւարտ եղած վարժարանին տնօրէնական պաշտօնը, չենք գիտեր ինչ ինչ հաշիւներու պատճառաւ իրեն զլացուեցաւ այդ պաշտօնը եւ ինք ստիպուած եղաւ սրտի ցաւով լքել իր պաշտօնավարած վարժարանը, ուրկէ ստացեր էր իր կրթա-դատիարակչական սնունդը եւ շրջանաւարտ եղեր էր բարձր գնահատականներով: Ինչո՞ւ չուրախանայինք մենք՝ իր ուսուցիչները եւ մատով զինք ցոյց տալով ու արդար հպարտութեամբ ի լուր աշխարհին չյայտարարէինք. «Ահաւասիկ մեր աշակերտուհին, որ այժմ կը տնօրինէ իր եւ մեր դպրոցը...»:

Ու տակաւին մեր բազմաթիւ «վա՛յ» դեկավարներ ասդ ու անդ կուրծք կը ծեծեն վայվայելով թէ իբր հայերէնի ուսուցիչներ չունինք, հայ երիտասարդ-երիտասարդուհիները մանկավարժութեան ճիւղին չեն հետեւիր:

Տիկնայք եւ պարոնայք դեկավարներ, արդի՞նք կ'ուզէք, մանաւանդ այս մրցակցային աշխարհին մէջ, պէտք է գնահատէք ու գոհացնէք ձեր ուսուցիչները, արժանապատիւ ապրելու չափ աշխատավարձ վճարելով անոնց, այլապէս օր պիտի գայ, երբ այսօր ձեր առաջարկած աշխատավարձով աշխատելու ստիպուած ուսուցիչներն ալ պիտի չգտնէք վաղը: Ամենէն ցած ամսականով հայերէնի ուսուցիչ փնտռելը, կամ բերել ռեւէ մէկը որ կրնայ «քալեցնել» (եղլա տանիլ) հայերէնի դասապահը՝ կը ստիպէ ինծի տալ յաջորդ հարցումը՝ «Հայ որակեալ ուսուցիչ-ուսուցչուհիին նորո՞յթն ալ անցեր է արդէն»:

Դպրոց ունենալու սիրոյն հայ դպրոց դարձնելը ժամավաճառութիւն է, որովհետեւ աւելի շատ միջակութիւններ պիտի ելլեն քան ձեր եւ մեր երագած «վաղուան ազգային դեկավարներն ու գիտակից հայերը»(*):

(*) Սրտի անհուն բերկրանքով մամուլէն կ'իմանամ թէ Լոս Անճելըսի Շ. Եւ Է. Մէրտինեան Հայ Աւետարանական վարժարանը ձեռնարկած է նոր դպրոցաշէնքի մը կառուցման՝ Պէզճեան ընտանիքի առատաձեռն նուիրատուութեամբ:

Տեսակէտ

Ծուռ նստինք, շիտակ խօսինք

Երանուհի Ղազարեան

Լեզուն որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր

Կը կարդային զայն արդէն ու պակսեցան անոնք ալ ...

Վահան Թեքեան



Կ'ընդվզիմ երբ մամուլին մէջ յաճախ կը հանդիպիմ պիլիոն եւ ամեակ «բառ»երուն: Առաջինը հայերէն չէ, երկրորդը բառ չէ:

Հայերէնի մէջ պիլիոնին համապատասխանող եզրերը երկիւիոն կամ միլիառ են: Ճիշդ է թէ երկրորդը, որ աւելի յաճախ կը գործածուի, օտար ծագում ունի (ֆրանսերէն, milliard), սակայն արդի հայերէնի մէջ ընդունուած եւ հաստատուած ձեւն է «հազար միլիոն»ը արտայայտելու: Եթէ կը վախնանք թէ ընթերցողը անծանօթ է միլիառ-ին, կրնանք փակագիծի մէջ լատինատառ billion գրել:

Գալով -ամեակին, այդպիսի առանձին բառ գոյութիւն չունի մեր լեզուին մէջ: Ան երկրորդ բաղադրիչն է բարդ բառի մը, որ թիւի մը հետ միանալով տարեդարձ կամ տարեկից կը նշանակէ: Այսպէս՝ յիսնամեակ (50ամեակ) կամ 50րդ տարեդարձ կամ տարեկից, հարիւրամեակ (100ամեակ) կամ 100րդ տարեդարձ կամ տարեկից: Անընդունելի են 50րդ ամեակ, 100րդ ամեակ արտայայտութիւնները:

Անկասկած յօդուածագիր թէ խմբագիր քաջ գիտեն թէ որն է ճիշդը, բայց մին՝ աւելի մատչելի դառնալու փափաքին կամ ժամանակի սղութեան, միւսը՝ փափկանկատութեան կամ անուշադրութեան, համարձակի՞մ ըսել նոյնիսկ անտարբերութեան, իբր հետեւանք ընթերցողին կը ներկայացնեն սխալը, որ կամաց-կամաց կը հաստատուի եւ կը գործածուի որպէս ճիշդ: Չէ՞ որ այդպէս գրուած էր ...

Բոլորս ալ մեր առօրեայ խօսակցութիւններու ընթացքին կը գործածենք այս կամ այն օտար բառը կամ արտայայտութիւնը: Բանաւոր է, առժամեայ, կ'ըսուի ու կ'անցնի: Կարելոյ է որ մնայուն գրաւոր խօսքը ըլլայ կարելի եղածին չափ անթերի:

Այսօր, երբ հայատառ մամուլը հետզհետէ կը նօսրանայ, երբ կը փակուին հայեցի դաստիարակութեան կռուան-կրթարաններ, երբ կ'ապրինք համացանցի ընձեռած անմիջական լրատուութեան կարելիութեանց դարուն, հայ տունէն ներս մտնող հայ թերթին

դերը չի կրնար ըլլալ պարզապէս լրատուական: Կ'ակնկալենք յօդուածագիրներէն որ ըլլան աւելի բժախնդիր, խմբագիրներէն՝ մէկդի թողուլ փափկանկատութիւնը եւ սրբագրել սխալը, երկուքէն ալ՝ յարգել ընթերցողին իմացականութիւնը եւ ճիշդը հրամցնել, ինչու՞ չէ, սորվեցնել ալ անոր:

Վերջերս զանազան ձեռարկներու ներկայ կ'ըլլան նաեւ հայ «վազող»ներ ... այսինքն՝ այս կամ այն քաղաքական պաշտօնին ձգտող թեկնածուներ: Զիրենք ներկայացնողներէն ոմանք հանգիստ-հանգիստ կը գործածեն «վազել» (running) բառը: Ինչու՞ միտք յոգնեցնել գտնելու անոր ճշգրիտ թարգմանութիւնը: Ունկնդրողները հանգիստ-հանգիստ կը լսեն, կ'անդրադառնան սխալին, ոմանք կը ժպտին ... ա'յսչափ: Ու՞ր կը վազենք, ու՞ր կ'երթանք: Երբ հայերէնով կը ներկայացնենք մեր քուէն փնտռող մեր յարգելի հայրենակիցը, եկէք գործածենք թէ՛ նոյն նպատակին ծառայող, թէ՛ ճիշդ եւ թէ՛ ներդաշնակ «թեկնածու» կամ «ընտրարշաւի մասնակից» արտայայտութիւնները փոխանակ անգլերէն running-ի բառացի թարգմանութեան:

Պիլիոն ամեակ այսպէս վազելով ... ետքայլ միայն կրնայ արձանագրել մեր մեծասքանչը:

Գրական-Մշակութային

Անգուզական ԳՈՀԱՐԸ

ԳՈՀԱՐԻ աւանդավէպը սկսաւ հիսուսիլ թուականէս շուրջ 20 տարիներ առաջ, երբ 1996



թուականին Տիկին Գոհար Խաչատուրեան այցելեց Հայաստանի հիւսիսային շրջանները, որոնք 1988ի աւերիչ երկրաշարժին պատճառով ենթարկուած էին քանդումի: Տեսնելով շրջանի ժողովուրդին ահաւոր թշուառ վիճակը, ազնուասիրտ հայուհին որոշեց աշխատանքի նոր առիթներ և եկամուտի աղբիւրներ ստեղծել անոնց համար: Այդպիսով անօթեւան մնացածները դուրս պիտի գային իրենց թշուառութենէն, պիտի ունենային բնակարաններ,

ապահովութիւն և յոյս, գեղատեսիլ շրջապատ ու միջավայր՝ երկրաշարժէն կործանած շրջանին կեդրոնը հանդիսացող Գիւմրի քաղաքին մէջ:

Ի գոհացում իրենց սիրեցեալ մօր փափաքին ու ի յարգանս անոր եւ ի յիշատակ իրենց



հօր՝Արամին, Խաչատուրեան եղբայրները՝ Յարութ, Շահէ և Նար, հիմը դրին ԳՈՀԱՐ երաժշտական մեծ հաստատութեան, որ տարիներու ընթացքին աճեցաւ հասնելու իր այսօրուան մակարդակին, որ անվարան կարելի է կոչել միջազգային:

Այն օրէն ի վեր մինչեւ այսօր, ԳՈՀԱՐի միջազգային ելոյթները ամբողջովին կը հոգացուին ու կը ֆինանսաւորուին Խաչատուրեան Ընտանիքին իշխանական ներդրումներով, ի մասնաւորի Յարութ

Խաչատուրեանի, որ ոչ թէ անոր ելոյթներուն առջեւի աթոռները գրաւող անձնաւորութիւնն է, այլ այն անգուգական մեկենասն է, որ իր ամբողջ եռանդն ու կորովը տրամադրած է՝ ԳՈՀԱՐի տարուէ տարի ինքզինք գերազանցող յաջողութիւններուն սատարող մէն մի մանրամասնութեան վերահսկելու աշխատանքին:

Անգուգական ԳՈՀԱՐը երէկ՝ 29 Հոկտեմբեր 2015ի երեկոյեան «Ֆորում Տը Պէյրութ»ի մէջ մեկնարկեց իր չորսօրեայ համերգներու ծրագիրը: ԳՈՀԱՐ համոյթի 183 արուեստագէտներէ կազմուած արուեստի հսկայական բանակը՝ իր երգչախումբով, պարախումբով, նուագախումբով, մեներգողներով, տնօրէնով եւ խմբավարով, Լիբանանահայ երաժշտասէր հանրութեան մատուցեց իւրաքանչիւր հայորդիի մեծ հպարտութիւն պարգեւող՝ Հայ երաժշտական արուեստի անկրկնելի 100 գոհարներ, նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին: Երեք տարուան բեմական գործունէութեան ընդմիջումէ մը ետք, ԳՈՀԱՐը ինչպէս երէկ՝ յառաջիկայ օրերուն եւս, իր բծախնդրօրէն պատրաստուած ու կազմակերպուած ծրագիրով պիտի բաբախէ Լիբանանի երկնակամարին տակ:

Իր համերգներուն ընթացքին, ԳՈՀԱՐ համոյթը պիտի հնչեցնէ բոլոր ժամանակներու հայկական սիրուած խորհրդանշական հարիւր ստեղծագործութիւններ՝ իւրաքանչիւր օրը յատուկ ծրագիրով:

Իր առաջին ելոյթին, ԳՈՀԱՐի մեկնաբանութեամբ եւ գործիքաւորմամբ՝ հնչեցին հայկական սիրուած հին ու նոր ազգային, հայրենասիրական, ժողովրդային եւ ռազմաշունչ 34 երգեր, առաջին անգամ ըլլալով խմբավարութեամբ մայեսթրօ Նաթալի Գալստեանի, որ իր ցպիկով բեմին վրայ եր՝ արժանաւորապէս շարունակելու մեծ մայեսթրօ Սեպուհ Արգարեանի աւանդը:

«Մէկ տարի առաջ եղած եմ Լիբանան եւ իրօք ապշած ու հիացած էի, թէ ինչքան հայրենասիրութիւնը շատ է լիբանանահայերուն մօտ», ըսաւ մայեսթրօն: «Մեծ ցանկութիւն ունէի, որ այս համերգը տեղի ունենայ Լիբանանի մէջ եւ այդ մէկը մեծ երազ մըն էր: Անկեղծօրէն ինքզինքս պիտի արտայայտեմ միայն մեր արուեստով, որովհետեւ աւելի չեմ

կրնար բան մը ըսել, քանի որ այնքան հզօր է այն երաժշտութիւնը որ մենք կը կատարենք, այնքան համախմբող է, որ անկէ աւելին կարելի չէ խօսքով փոխանցել», աւելցուց ան:

Իր կարգին, ԳՈՀԱՐ համոյթի գործադիր տնօրէն Սեւակ Սերոբեան վստահեցուց, որ ինչպէս միշտ այս անգամ եւս ԳՈՀԱՐի համերգները պիտի ըլլան աննախադէպ:

«Այս անգամ եւս ԳՈՀԱՐը պիտի հնչեցնէ Լիբանանահայութեան՝ բոլոր ժամանակներու սիրուած հայկական երգերը: Ինչպէս միշտ այս անգամ եւս, ընդհանուր աշխատցուած ձեւը, ընդգրկուած այս մեծածաւալ գործունէութիւնը մեծ պատասխանատուութիւն էր մեզի համար: Հայոց Յեղասպանութիւնը մեր բոլորին համար իրայատուկ տեղ ունի մեր սիրտերուն եւ մեր միտքերուն մէջ: Մեր նախահայրերը իրենց ծանր, դաժան օրերը անցընելով կրցան ապրիլ, գոյատեւել, հայ մնալ. իրենք մեզի կրցան աւագի վրայ Այր-բէն-գիմ սորվեցնել եւ այսօր մենք եկած ենք հարիւր տարիներ ետք՝ մեր ճիտին պարտքը անոնց տալու: ԳՈՀԱՐի անձնակազմը եւ տնօրէնութիւնը ասկէ նուազը չէր կրնար ընել, աստոր



համար այս տարուան համերգները իրայատուկ են, իրայատուկ պիտի ըլլան եւ անկրկնելի իմ կարծիքովս, որովհետեւ ոչ մէկ ճիգ խնայեցինք, որպէսզի մեր այդ կուտակուած 100 տարիներու զգացումները դրսեւորենք ԳՈՀԱՐի համերգներով», ըսաւ Սեւակ Սերոբեան:

Արդարեւ, միայն Կիլիկիոյ թագաւորութեան վայել է այս հրաշք համերգը, որուն ոչ միայն համերգային

ծրագիրը յատուկ եւ շատ մանրամասն ընտրուած է, այլ նաեւ թեքնիք առումով ան եզակի է ու գերյազեցած, իր օգտագործած արհեստագիտական միջոցներով՝ ձայնի, լոյսի ու նկարի անգուգական եւ ներդաշնակ հնարաւորութիւններով ու կատարումներով:

ԳՈՀԱՐ շատ բան ունի սորվեցնելիք նոյնիսկ համերգներու դաշտին մէջ ամենաարհեստավարժ ու փորձառու հաստատութիւններուն՝ մեծ հպարտութիւն պարգեւելով իւրաքանչիւր հայու, որուն միտքն ու հոգին տակաւին շատ երկար տպաւորուած պիտի մնան ԳՈՀԱՐով:

ԳՈՀԱՐի նպատակը ազնիւ, պարզ ու յստակ է: Ըստ անոր պատասխանատուներուն, անոր նպատակն է. «Հայկական Մփիւռքին ազգային հպարտութիւն, գեղարուեստական հաճոյք պատճառել ու անոր Հայկական ոգի տոգորելն է: ԳՈՀԱՐի ճամբան Ա.Բ.Գ.ն է: ԳՈՀԱՐի սատարը Հայ Ուսուցիչին է: ԳՈՀԱՐի ծածանած դրօշակը Կիլիկիոյ թագաւորութեան դրօշակն է»:

Կեցցէ ԳՈՀԱՐը ու կեցցեն անոր պահապանները:

ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Գրական-Մշակութային

ՓՈԻՆՋ ՄԸ ՉԱՓԱԾՈՅ ԵՐԿԵՐ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՀՈԳԻԻՄ ՀԵՏ

Հոգիս նման է ա՛յն գետին,

Որ իր հոսանքով վարար

Կը մաքրէ տիղմն իր ափին

Կը զուլալուի շարունակ....

Մարդիկ կու գան զուարճանքի

Ափերուն վրայ իր դալար

Թողլով իրենց ժանգն ու փոշին

Հեռանալով անայլա՛յլ....

Գետը դարձեալ պաղպաջո՛ւն

Իր ջուրերովը վարար

Հոսանքովն իր անդադրում

Կը տանի ադտն ջրերն ի վար....



Խիճեր, քարեր ալ կը նետեն

Պղտորելու գետն զուլալ

Գետը միշտ ալ կը մնայ բիրեղ

Իր նախնական մաքրութեամբ....

Հոգիս ոգիով զարմանահրաշ

Եւ գաղտնիքով արարչական

Կ'ինքնամաքրուի շարունակ

Կը բարձրանայ երկնասլաց.... Ե.Գ.

ԱՇՈՒՆԻՍ ՄԷՋ....

Աշունիս մէջ տերեւաթափ

Գոյներ, բոյրեր կան չխամրած

Կանաչ խոտով վառ բաբախող

Գողտրիկ պարտեզ կայ կենսայորդ....

Պարտեզիս մէջ գեղադալար

Կեանքս երգեր կը հիւսէ յար

Նոր աւիւնով դեռ կը խայտայ

Գտած տողով յորդ կ'արբենայ....

Յոյզեր, միտքեր այցի կու գան

Տիեզերքի ամէն կողմէն

Գարնան տենդով մը սրբազան

Աւիշ որպէս ներս կը խուժեն



Հրակարմիր աշունիս մէջ

Դալար գարունս կը հեւայ դեռ

Գողտրիկ պարտէզս կանաչաւուն

Նոր ծաղիկներ ունի փխրուն....

Երանի չէ՞ այն աշունին

Որ երգ ունի լուսաթաթաւ

Որ ծաղիկով մշտափրփր

Թոյր ու բոյր կու տայ մարդկանց: Ե.Գ.

ՄԻՐՏՍ ԿՐԱԿՈՏ

Միրտս կրակոտ տուի հովին

Հովը մեղմիկ դարձաւ քամի

Փոթորկեցաւ դարձաւ մրրիկ

Վիշապաձայն ու սարսռազին.....

Միրտս կրակոտ տուի ծովին

Ծովը ալեաց մէջ փրփրադէզ

Կատաղեցաւ ու շառաչեց

Սպիտակ բոցեր ան արձակեց....

Միրտս կրակոտ տուի լեռան

Թուխ ամպերով ծածկուեցաւ

Ամպերն այդ շանթ ու կայծակ

Որոտացին ահեղաձայն....



Միրտս կրակոտ տուի ծառին

Դալարագեղ ան կանաչեց

Պտուղներով հիւթեղ ոսկի

Բոլորին բերք, բարիք բաշխեց....Ե.Գ.

ԵՐԵԿՈՆ Կ'ԻՋՆԷ.....

Երեկոն կ'իջնէ տխուր ու դանդաղ

Զերթ վարագոյրը թատրոնի բեմին

Ծիրանի կը հագուի հորիզոնն անափ

Տխուր վերջերզն է օրուան աւարտին....

Սրտիս մէջ կ'իջնէ բաժանման թախիծ

Երագ-կեանքն այս պիտի աւարտի

Անտէր պիտ'մնան կարօտ ու կսկիծ

Խորին խորհուրդովը մայրամուտիս....

Յետոյ պիտի գայ գանգրահեր տղան

Պիտի փորփրէ իմ յուշամատեանս

Այնտեղ պիտ'գտնէ երագներ անմար

Ապրումներ վարար, տենչեր անաւարտ....

Ո՞վ պիտ' հասկնայ անձը որ կար

Կրակներն անոր, տենդերն սրարբած

Իմ հոգին սակայն ուրախ պիտ'խայտայ

Ուրիշին խինդով գտնէ բալասան....Ե.Գ.


Յօդուածներ

Հոկտեմբերը Մշակոյթի Ամիս

Հայերէն Ընթերցասիրութիւնը Խնդիրներ եւ Մարտահրաւերներ

Գիրքը Որպէս Արտադրութիւն

Գիրքը որպէս սպառողական ապրանք, ինչպէս որեւէ այլ արտադրութիւն, կ'ենթարկուի արտադրութեան եւ պահանջքի (supply& demand) օրէնքներուն:



Հակառակ այն իրականութեան, որ անգրագիտութեան երեւոյթը բաւական նուազած է հայ ժողովուրդի զաւակներուն մօտ, նամանաւանդ երիտասարդ սերունդին մօտ, հայերէն գիրքի հրատարակութեան ճարտարարուեստը եւ հոն օգտագործուող թեքնիքը տակաւին բաւականին տկար են ու անբաւարար, համեմատած ուրիշ ժողովուրդներու գիրքերու արտադրութեան ճարտարարուեստին:

Իւրաքանչիւր մէկ միլիոն անձի համեմատութեամբ հրատարակուած գիրքանուններու թիւը մեր մօտ շատ աւելի նուազ է՝ քան քաղաքակրթուած ազգերու արտադրած գիրքանուններու թիւը:

Եթէ ընդունինք այն կէտը, թէ գիրքը որպէս սպառողական ապրանք՝ կ'ենթարկուի արտադրութեան եւ պահանջքի օրէնքներուն, այսինքն չ'արտադրուիր եթէ պահանջքը չկայ, պիտի տեսնենք, որ կարգ մը հայ աղբիւրներու տուած պատճառաբանութիւնը, թէ ելեկտրոնային սարքերու գոյութիւնը, համակարգիչի գոյութիւնը եւ արհեստագիտութեան սրընթաց զարգացումը բացասական երեւոյթներ են կամ պատճառներ՝ հայ ժողովուրդի մօտ ընթերցասիրութեան եւ հետեւաբար գիրքի պահանջքի նուազումին, այնքան ալ ճիշդ չէ, նամանաւանդ երբ նկատի ունենանք, թէ Հայաստանի մէջ օրինակի համար, ըստ վերջին տուեալներուն (մէկ տարուան հաշուարկով), հոն ապրող բնակչութեան իւրաքանչիւր մէկ միլիոն անձի համեմատութեամբ հրատարակուած է 105 անուն գիրք, երբ համացանցը (Internet) օգտագործող անձերուն թիւը կը կազմէ Հայաստանի բնակչութեան 4% տոկոսը: Մինչ օրինակի համար երբ Ճափոնի մէջ համացանց օգտագործող անձերուն թիւը կը կազմէ բնակչութեան 40% տոկոսը (ուր օգտագործուող ելեկտրոնային սարքերու եւ համակարգիչներու թիւերու համեմատութիւնը եւ արհեստագիտութեան զարգացումը կարելի չէ որեւէ մէկ ձեւով բաղդատել Հայաստանի հետ), հոն հրատարակուող գիրքի անուններու թիւը (միեւնոյն տարուան տուեալներով), մէկ միլիոն բնակչութեան համեմատութեամբ եղած է 450 անուն գիրք... այսինքն՝ քառապատիկ աւելի, քան Հայաստանի մէջ հրատարակուած գիրքերու թիւին համեմատութիւնը:

Անձնական հետաքրքրութեամբ կատարած այցելութիւններովս գրախանութներու, գիրքերու ցուցահանդէսներու եւ գրադարաններու, ինչպէս նաեւ հիմնուելով ծնողներու եւ



ուսուցիչներու հետ փոխանակած խօսակցութիւններու արդիւնքներուն վրայ, ինծի համար յստակ է այլեւս, թէ տարբեր տարիքներու ճաշակներն ու հետաքրքրութիւնները գոհացնող հայերէն գիրքերու զանազանութիւն մը գոյութիւն չունի հրապարակին վրայ, իսկ ամենակարեւորը գոյութիւն չունի որպէս արտադրութիւն, գիրքի վաճառունակութեան (marketing) որեւէ մէկ սերտուած ու գիտական ձեւ:

Շատ յաճախ հայերէն գիրքեր կը հրատարակուին՝ հրատարակուելու սիրոյն, տրցակներով դիզուելու համար հրատարակող ազգային հաստատութեանց ամբարներուն մէջ: Գրասեր անհատներու մեկենասութիւնն ու այլ բարեսիրական հաստատութիւններու նիւթական մեծ ներդրումներն ալ կը վատնուին այս ձեւով:

Հետեւաբար եթէ դարձեալ հիմնուինք արտադրութեան եւ պահանջի օրէնքին վրայ, կարելի է եզրակացնել, թէ հայերէն գիրքին բովանդակութիւնն ու ձեւը եթէ ժամանակավրէպ են եւ ոչ քաջողական ու սպառողին (ընթերցողին) ճաշակն ու պէտքը չեն գոհացներ, եւ եթէ մանաւանդ չեն յարգուիր վաճառունակութեան գիտական միջոցները, որոնք են Արտադրութեան Պիտանելիութիւնը, Գինը, Ներկայացման ձեւն ու անոր Օգտակարութիւնը ցոյց տալու աշխատանքը եւ Տրումի Մեքանիզմը (The Four "P"s: Product, Price, Promotion, Place), այս պարագային հայ գիրքի պահանջք տեղի պիտի չունենայ, այսինքն հայերէն գիրքի պահանջքը պիտի պակսի, հետեւաբար նաեւ հայերէն ընթերցասիրութիւնը:

Անցնինք այլ կարեւոր հարցի մը, որն է անընթերցասիրութիւնը:

Անընթերցասիրութիւնը

Անընթերցասիրութեան (aliteracy) խնդիրը եւ անկէ բխող հետեւանքները շատ աւելի լուրջ եւ վտանգաւոր են, քան ինքնին անգրագիտութիւնը: Անընթերցասէրները այն անձերն են, որոնք կարողութիւնը ունին կարդալու, սակայն կը նախընտրեն չկարդալ: Անընթերցասէրներու գրագիտական կարողութիւնները շատ յաճախ բաւարար են համալսարանական պահանջներուն, սակայն անոնք հաճոյք մը չեն տեսներ ընթերցանութեան մէջ եւ ոչ ալ անոր կը ձեռնարկեն՝ բացի չափազանց կարեւոր պարագաներէ, ուր անոնք ստիպուած կը զգան քանի մը տող կարդալու կամ գրելու:

Անընթերցասիրութիւնը ծնունդ կու տայ անգրագիտութեան: Անընթերցասէրները երբ ծնողք կը դառնան, շատ գէշ օրինակ կը հանդիսանան իրենց զաւակներուն, քանի ոչ մէկ ձեւով անոնք կը քաջալերեն կամ կը մղեն իրենց զաւակները գիրն ու գրականութիւնը սիրելու:

Ընտանիքը մանուկներու դաստիարակութեան գործընթացին մէջ առաջին կարեւոր ազդակն է: Հոն է, որ փոքրիկը առաջին անգամ կ'ընկալէ մարդ արարածի յատուկ կենսական գիտելիքներ, իսկ այդ ընկալումը շատ յաճախ կը կատարուի ծնողները կապկելով: Հետեւաբար երբ տան մը մէջ ծնողքը չի կարդար՝ փոքրիկը պիտի չկարդայ:



Գիտական լուրջ փաստեր չկան, թէ ընթերցասիրութիւնը կը փոխանցուի ժառանգութեամբ: Ուրեմն ընթերցասիրութիւնը, ինչպէս այլ արժէքներ կամ ժխտական մոլութիւններ, տան մթնոլորտին արդիւնքն են, որ շատ կարեւոր դեր կը խաղայ այս եւ նման պարագաներուն:

Միւս կողմէ ընթերցասիրութեան զարգացման շատ աւելի մեծ վտանգ կը հանդիսանան անընթերցասէր ուսուցիչ-ուսուցչուհիները, մանաւանդ եթէ անոնք լեզուներու եւ գրականութեան դասատուներ են: Անընթերցասէր ուսուցիչ-ուսուցչուհիները երբ շատ գէշ ձեւով կը ներկայացնեն կարեւոր նիւթերը, անոնց դասապահերը շատ անհրապուրիչ եւ վանողական կ'ըլլան ու զուրկ ընդհանուր գիտելիքներէ եւ կը սահմանափակուին դասագիրքի պարունակութիւնը միայն գոց սորվիլ տալով, առանց նոր եւ հետաքրքրական տեղեկութիւն մը փոխանցելու աշակերտին, որուն համար դասապահը կը վերածուի պատիժի, ըմբոստացնելով փոքրիկները եւ անոնց մէջ սերմանելով ուսուցիչին, հետեւաբար եւ անոր սորվեցուցած գիրին ու ընթերցանութեան դէմ ժխտական կողմնորոշում: Այսօր փաստ է, թէ այն փոքրիկները, որոնք իրենց դպրոցական տարիները որպէս աշակերտ կ'անցընեն անընթերցասէր ուսուցիչ-ուսուցչուհիներու դասարաններուն մէջ, իրենց կարգին անընթերցասէր դառնալու լուրջ վտանգին առջեւ կը գտնուին: Իսկ երբ այդ փոքրիկները կու գան նաեւ անընթերցասէր կամ անգրագէտ տուներէ կամ ծնողներէ, վտանգն ու փորձանքը կը դառնան կրկնապատիկ:

Գիրքին եւ ընթերցասիրութեան հանդէպ սերը՝ մանուկին քով կը զարգանան իր կեանքի առաջին տարիներուն, այսինքն նախադպրոցական եւ դպրոցական առաջին տարիներուն: Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ ընթերցասէր տուներէ եկող փոքրիկներ շատ աւելի լաւ արդիւնք ձեռք կը ձգեն դպրոցին մէջ: Հետեւաբար ընթերցասէր սերունդ մը պատրաստելու մէջ մեծ դեր ունին ծնողներն ու մանաւանդ մանկապարտեզի եւ նախակրթարանի ուսուցիչ-ուսուցչուհիները:

Կանուխ տարիքին՝ անգամ մը որ գիրքը փոքրիկին յաջողինք սիրցնել, ան հաճոյք պիտի զգայ զայն կարդալով: Եւ որովհետեւ այսօրուայ փոքրիկը վաղուան մարդն է, ապագայի համար մենք ստեղծած պիտի ըլլանք ընթերցասէր գլխագիր մարդիկ:

Հայերէն Լեզուի Երկուութեան Հարցը

Հայ փոքրիկներուն համար հայերէն ընթերցանութիւնը ունի իր դժուարութիւնները: Սփիւռքահայ (արեւմտահայ) փոքրիկները, որոնց բացարձակ մեծամասնութիւնը արդէն իսկ արեւելահայ գրականութիւն ընթերցելու անկարելիութեան առջեւ կը գտնուին (նկատի առած նաեւ տարբեր ուղղագրութեանց պարագան), ունին նաեւ այլ շատ կարեւոր դժուարութիւն մը, որն է այն հսկայ տարբերութիւնը, որ կայ այսօր սփիւռքահայ տան խօսակցական լեզուին եւ սփիւռքահայ գրական լեզուին միջեւ: Այս իրավիճակը լուրջ պարագայ մըն է, որ հեղինակները, մանաւանդ փոքրիկներու գրականութեամբ զբաղող



հեղինակները պետք է մղել պարզեցնելու իրենց գործածած գրական լեզուն, բառերն ու ոճը, որպէսզի ընկալելի ըլլան փոքրիկ ընթերցողին կողմէ:

Ընթերցողները իրենց փորձառութենէն գիտեն, թէ երբ կը կարդան բան մը, որ լաւ չեն հասկնար, այս մէկը կ'առաջնորդէ զրկուածութեան զգացումին (frustration), հետեւաբար գիրքը մէկ կողմ նետելու փորձութեան:

Արդէն իսկ գոյութիւն ունեցող լեզուական դժուարութիւններուն վրայ՝ պետք է աւելցնել նաեւ հայերէն լեզուի ուսուցման ձեւը եւ միջոցները, Հայերէն լեզուի դպրոցական ծրագիրներու եւ դասագիրքերու, այլ լեզուներու գիրքերու հետ համեմատած անհրապուրիչ, ժամանակավրէպ եւ աղքատ որակով ըլլալու փաստը, որոնք բնաւ չեն գոհացներ Հայ աշակերտին ընկերային, մտային եւ դաստիարակչական պէտքերը: Վերոյիշեալ տխուր իրականութիւնը աւելի եւս վանողական կը դարձնէ ընթերցասիրութիւնը Հայ աշակերտին մօտ:

Լուծումներու Առաջարկներ

Որեւէ հարցի արմատական լուծումը կարիք ունի գիտական լուրջ ուսումնասիրութեան, բան մը որ դժբախտաբար կը պակսի մեր ժողովուրդին մօտ, ուր ընդհանրապէս լուծումներ կը փորձենք գտնել շատ յաճախ հիմնուելով մեր ողջմտութեան (common sense) վրայ, որ կրնայ դժբախտաբար զուրկ ըլլալ գիտական հիմքէ:

Հիմնուելով կարիքները արժեւորելու գիտական ուսումնասիրութենէ բխող արդիւնքներուն վրայ, պետք է կազմակերպել ծրագրուած վարժանիստեր (workshops) ուղղուած ծնողներուն, ուսուցիչ-ուսուցչուհիներուն, գրադարանապետներուն եւ փոքրիկներուն հետ աշխատող այլ անհատներուն:

Երբ փոքրիկները կու գան ընթերցասիրութեան մթնոլորտէ զուրկ տուներէ, անոնց գրաճանաչումի եւ ընթերցասիրութեան ծանօթանալու առիթը պիտի յետաձգուի մինչեւ իրենց դպրոց մուտք գործելը, ուր դարձեալ շատ մը պարագաներուն՝ հարցական կը մնայ այս ուղղութեամբ կատարուող ճշգրիտ աշխատանքը: Հետեւաբար մանուկը զրկուած պիտի ըլլայ գիրն ու գիրքը սիրելու առիթէն, իր կեանքի սկզբնական շատ կարեւոր տարիներուն:

Եթէ կ'ուզենք բարեփոխել այս տխուր իրավիճակը եւ մանուկին առիթ տալ՝ լաւագոյնս օգտուելու ընթերցասիրութեան կապուելու այդ շատ կենսական տարիներէն, հիմնական փոփոխութիւններու պէտք է ձեռնարկենք եւ փորձենք ծնողներն ու ուսուցիչ-ուսուցչուհիները ուսուցանել եւ մարզել այդ ուղղութեամբ: Անոնց պէտք է տրուին բոլոր կարելոր տեղեկութիւններն ու ռազմավարական միջոցները, որպէսզի կարողանան զանոնք ի գործ դնել՝ ընթերցասէր սերունդներ պատրաստելու համար:

Գիրքերու գոյութիւնը մեծապէս կախեալ է անոնց ստեղծած պահանջքէն: Տարիքային խումբերու հետ յարմարող Հայերէն լեզուով զրուած քաջողական եւ հետաքրքրական գիրքերու չգոյութիւնը՝ իր ժխտական ազդեցութիւնը ունի հայերէն ընթերցասիրութեան զարգացումին վրայ: Միութենական թէ անհատական հրատարակչատուներն ու



հեղինակները պետք է նկատի ունենան այս պարագան: Գիրք ստեղծելի աւելի կարելոր է՝ ճիշդ գրականութիւն ստեղծելը: Լաւ կ'ըլլայ օգտուիլ արեւմտեան աշխարհի այս դաշտին մէջ կատարած փորձէն եւ անոնց հրապուրիչ ու օգտակար մանկական հրատարակութիւններէն: Ապա թէ ոչ՝ Հայերէն գիրքերուն մեծամասնութիւնը պիտի հրատարակուի հրատարակուելու սիրոյն եւ ի գուր պիտի երթան անոր համար տրամադրած մարդուժը, ժամանակը եւ մանաւանդ նիւթականը:

Մերօրեայ փոքրիկներուն ուղղուած գրականութիւնը պետք է արտացոլացնէ անոնց ժամանակակից ընկերային, մտային եւ մշակութային պէտքերը: Իսկ նիւթերը ըլլան իմաստալից եւ օգտաշատ ու անդրադառնան մերօրեայ կարելոր ընկերային արժէքներուն, ինչպէս գործակցութեան ոգի, ծագած հարցերու խաղաղ լուծում, պատասխանատուութեան գիտակցութիւն, հանդուրժողականութիւն, եւայլն:

Ամենակարելորդ՝ լեզուն պետք է ըլլայ հասկնալի, որպէսզի դիւրացնէ փոքրիկին իր կարդացած գիրքէն ընկալած տեղեկութիւնները՝ իր հերթին օգտագործելու իր ամէնօրեայ խօսակցութեան, մտածելակերպին եւ վարուելակերպին մէջ:

Գանք այլ կենսական հարցի մը. հրատարակութեամբ զբաղող կողմերը պետք է լուստեղեակ ըլլան վաճառունակութեան (marketing) բոլոր միջոցներուն եւ գիտելիքներուն, ամէն առիթով գործի դնելով զանոնք:

Իսկ Ո՞վ Պիտի Ընէ Այս Բոլորը

Պատասխանելու համար այս հարցին նախ պիտի շեշտեմ, թէ կարենալու համար ունենալ յարաճուն եւ շարունակական մարդկային զարգացում (Sustainable Human Development), ազգ մը կարիքը ունի պետութեան եւ հասարակական ու անհատական հաստատութիւններուն, որոնք երբեմն ձեռք ձեռքի տալով, շատ յաճախ ալ իրար ամբողջացնելով՝ սատարեն իրենց ժողովուրդի զարգացման:

Ի չգոյութիւն «Սփիւռքահայ Պետութեան», այս հարցի լուծման նախաձեռնողները պետք է ըլլան հայկական հաստատութիւններն ու միութիւնները՝ իրենց ներկայացուցած ազգային-եկեղեցական-հասարակական կազմակերպութիւններով եւ լրատուական միջոցներով՝ մետիայով (media), ինչպէս նաեւ մենք՝ որպէս գիրով, գրականութեամբ եւ սերունդներու դաստիարակութեամբ զբաղող անհատներ, իւրաքանչիւրս իր կարողութիւններով եւ հմտութիւններով, որ բնաւ չեն պակսիր, եթէ անշուշտ ճիշդ ձեւով օգտագործուին: Այո՛, մենք ունինք ուժեր եւ արժէքներ, որոնք մեծապէս կրնան սատարել այս եւ նման հարցերու լուծման:

Սակայն ո՞ր են անոնք: Պատմականօրէն հայերս բացառիկ կարողութիւնը ունինք նեղացնելու եւ խրտչեցնելու մեր հանճարներն ու արժէքները, որոնք շատ յաճախ հայութեան մէջ գործելադաշտ չգտնելով եւ կամ սրտնեղած՝ կը փնտռեն ու կը գտնեն օտար դաշտեր, ուր



կ'աշխատին ու կը փայլին որպէս անհատ աշխարհաքաղաքացիներ եւ բնականաբար այլեւս հայ չեն մնար:

Ունինք նաեւ այլ մոլորիւն մը, որն է տեղ տալ միջակութիւններուն, որոնցմով դժբախտաբար քիչ բացառութեամբ կը ղեկավարուին մեր ազգային եւ կրթական հաստատութիւնները՝ պատճառ դառնալով անոնց ձախողութեան: Այս մոլորիւնները եթէ չսրբագրուին՝ արժէքաւոր տղաք պիտի շարունակեն երթալ աշխատելու օտար դաշտերուն մէջ՝ փառք ու պատիւ ստանալու լուրջ ամպիոններու վրայ, իսկ հայկական հաստատութիւնները պիտի չկարենան կատարել իրենց վստահուած լուրջ դերը:

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Երջանկութիւն է բեկոր մը ճառագայթ ըլլալ խաւարին մէջ մոլորեալին....պճեղ մը անուշ սիրտ՝ տառապեալին....յոյս սփոփարար՝ անմխիթար մորմոքողին....գօրավիզ ու գօրակից՝ մենաւորին....հոգեմտաւոր սնունդ ու մանանա՝ ոգիի սովէն տոչորուողին....Երջանկութիւնը միշտ ալ անանձնական է, եթէ նկատի չունենանք այն խորունկ հոգեկան գոհունակութիւնը, զոր կը խորապրի զայն պարզեւողը....

.....

Առօրեայ մանր, գծուծ հարցերը կ'անհետին երբ աշխարհը կ'ընկալեմ համապարփակ հայեացքով....ուր վերջինները փոքրիկ հիւլէ մը անգամ չեն տիեզերական ամբողջութեան մէջ...Իսկ այդ մանրութիւնները որքան կը սպառեն մեր ներուժը, ամպի ծուկներ կը ստեղծեն մեր ներաշխարհէն ներս, մեր հոգիի մաքուր երկինքը կը մշուշապատեն յաճախ...Բայց երբ վեր կը բարձրանամ այդ մանրութիւններէն եւ կ'ընկալեմ համայնը, հոգիս կ'ընդլայնի, կ'ընդարձակուի եւ կարծես կը նոյնանայ տիեզերքին հետ....Մշուշը կը փարատի լայնահորիզոն տեսադաշտիս վրայ....

.....

Կեանքի փորձութիւններն ու տագնապներն են որոնք կը դառնան խթան ու մղիչ ոյժ ստեղծագործական աշխատանքի, արարման....Հանգիստ ու խաղաղ կեանքը մտքի եւ ոգիի լճացման կ'առաջնորդէ ընդհանրապէս....իսկ մարդ էակը ստեղծուած է արարման համար, նոր իմաստ գտնելու իր գոյութեանը այս աշխարհիս վրայ, նոր շունչ ու որակ փոխանցելու մարդկային կեանքին....

.....

Փայլուն եւ գունագարդ փետուրներով զարդարուիլը յատուկ է մասնաւորապէս այն մարդկանց, որոնց ներաշխարհը շատ է դատարկ....Արտաքինը այդպէս զարդարելով, անոնք կը կարծեն թէ ցուցամոլութեամբ կարելի պիտի ըլլայ պարտկել, ծածկել, սքօղել հոգիի եւ մտքի դատարկութիւնը, որ սակայն կ'աղաղակէ այդ փետուրներուն տակէն, առաւել շեշտելով դուրսի եւ ներսի ահաւոր հակադրութիւնը...

.....



Բառե՞րն ալ կը հիննան, կը ծերանան, կը ժանգոտին, երբ կը գործածուին տեղի-անտեղի, անհամ ու անբոյր, անիմաստ ու անյոյզ, գռեհկօրէն տափակ ու ճապաղ....կը պարպուին այն շունչէն, հեւքէն, ներքին կրակէն, որոնք ճշմարիտ ապրում մը կը փոխանցեն, գաղափար մը կը փոխադրեն միտքէ-միտք, զգայնութիւն մը կը հաղորդեն սիրտէ-սիրտ, յոյզով կը թրթռացնեն ջիղերը....որոնք բաբախուն կեանքով կ'օժտեն այլապէս բառարանին մէջ մրափող բառը, որ կը ծերանայ, դանդաղօրէն կը մեռնի ալ, եթէ չկայ անոր կենսատրոփ շունչ հաղորդող ոգիի կայծը....

.....

Բանը եւ բառը....Մարդ էակին գերագոյն արժանատրութիւնն է գուցէ իր մաքառումն ու պայքարը յաւիտենական բառ ու բանին հետ...իբր մտածումը, խոհն ու յոյզը բառերու վերածելու հոգեպարար աշխատանքը..: Միտքը մեր մէջ բանտուած պիտի մնար առանց խօսքի, որ խոհ-ապրումին կու տայ բառերու հանդերձանքը...: Եւ ի՛նչ ներքին ուրախութիւն ու բերկրանք է, երբ միտքն ու յոյզը կը գտնեն իրենց ճիշդ բառային զգեստաւորումը....: Կեանքիս ամենէն լուսաթաթախ պահերը ապրած եմ, երբ կրցեր եմ Բանը եւ Բառը իրարու ներդաշնակ տարագումով յղանալ, արարել...: Բանն ու Բառը հոգեմտաւոր հաց են, որոնց պիտի մօտենալ խորունկ յարգանքով, երկիւղածօրէն....

.....

Եթէ որեւէ արուեստ չկարենայ թափանցել մարդկային սիրտը, չկարենայ բաժնել մարդուն տագնապը, ցաւը, ողբերգութիւնը, եթէ չկարենայ դառնալ հարազատ հայելին՝ մարդուն ներքին տուայտանքներուն, ապրումներուն, ներքին փոթորիկին, ալեկոծումներուն....յայնժամ այդ արուեստը լոկ ձեւական, ցուցադրական արուեստ է, որ ոչ մէկ լուրջ աղերս ունի մարդկային հոգիին խորախորհուրդ էութեան հետ....Նման արուեստը՝ երգ, երաժշտութիւն, բանաստեղծութիւն, գրականութիւն, նկարչութիւն....չի կրնար իսկապէս դպչիլ սրտիդ, անանուն խռովքներ արթնցնել մէջդ, ճշմարտօրէն յուզել քեզ....Ճշմարիտ արուեստը կը մարդկայնացնէ, կ'ազնուացնէ քեզ....Մնացեալը show-business է եւ ուրիշ ոչինչ....

.....

Անոնք որոնք ապրած են Հայաստանի սահմաններէն ներս, պիտի չճանչնան երբեք՝ Եւրոպայի, Միջին Արեւելքի, Ամերիկաներու....մէջ ապրող տարագիր հայուն կարօտը, խռովքը, դիւթանքը, խորախորհուրդ զգացումը, երբ Հայաստան բառը հնչէ իրենց ունկերուն....ՀԱՅԱՍՏԱՆ...երազ էր անհասանելի, զերթ կապոյտ թռչուն...Հիմա ալ, անկախ բոլոր հանգամանքներէ, Հայաստանի իրականութիւնը աղբիւր է հայօրէն ապրելու, հայօրէն յարատեւելու մեր ճիգերուն, հաւատքին, տեսլականին....Առանց անոր քարեղէն, շօշափելի իրականութեան, թափուր է հայ կեանքը, անիմաստ ու աննպատակ, նոյնիսկ եթէ դրախտային թուի ըլլալ ամէն ինչ....

.....



Տարագիր սփիւռքահայ մարդ ըլլալը ծանր ճակատագիր է....Հայրենիքէն հեռու, ան կ'ապրի անոր անմար կարօտով, հայրենիքէն ներս, ան օտարի աչքով կը դիտուի իր հայրենակիցներուն կողմէ....Եւ ներքին վիրաւորանք ու ցաւ կ'ապրի լռելեայն....Ո՞ր է, վերջապէս, իր բուն տեղը այս արեւին տակ....Դուրսը՝ օտար ամերիկացի վրայ, բռնագրաւուած Արեւմտահայաստանի մէջ, որմէ վտարանդի է եղած...թէ՞ ներկայ ՀՀ-ի մէջ, ուր ան կիսա-օտար գոյութիւն մըն է, լաւագոյն պարագային՝ «աղբար» մը, այս բառին թելադրած ամենէն տարբեր ենթա-իմաստներով....Երկփեղկուած, բազմափեղկուած ինքնութեան տագնապը անոր ո՞վ կրնայ հասկնալ...

.....

Կողոպուտի մշակոյթ....Սա է որ կը տիրապետէ ներկայիս սպառողական համատարած հասարակութեան բարքերուն մէջ...Սա կարելի է նաեւ կոչել՝ «Մարդը մարդուն՝ գալլ»....Այնքան կատարելագործուած է կողոպուտի այս մշակոյթը, յետին մանրամասնութիւններով մշակուած ու ծրագրուած, որ պետութիւններ, կառոյցներ, կազմակերպութիւններ՝ ա՛յս կամ ա՛յն ձեւով կը բանին այդ հիմքին վրայ....Կողոպուտի կամ թալանի այս մշակոյթը տիրական է նաեւ մեր երկրին մէջ դժբախտաբար....

.....

Անկեղծութիւնը կը զգաստացնէ, երբեմն կը վիրաւորէ, բայց անպայմանօրէն բան մը կը փոխէ մեր գրուցակցին մէջ, անդրադարձ մը կը թողու, մտածել տուող անդրադարձ մը, որ թերեւս մաքրէ հոգին կուտակուած ժանգէն, միտքն ալ՝ կուտակուած նախապաշարումներէն եւ քարացած կարծրատիպերէն....Անկեղծ խօսքը գիտակցութեան խթան է...

.....

ԲԱՐԻՆ տկար էակը չէ երբե՛ք....այլ՝ այն ուժեղ ձեռքը, որ թեւ ու թիկունք կ'ըլլայ տկարին ու անկարին....ամուր այն հոգին է ա՛ն, որ կը գօտեպնդէ, յոյս կու տայ անյոյսին, ոգի կը ներշնչէ...լուսաւոր ա՛յն անձն է, որ կը բարձրացնէ, կը վեհացնէ անկեալը...Բարին դրական ոյժ է, ոգի, սեր ու գորով, որով օժտեալ կ'ըլլան ճշմարտօրէն ուժեղները, մինչ չարը միշտ ալ տկար է, ոգեզուրկ եւ հոգեզուրկ, որ ուրիշը կոխկոտելուն մէջ միայն կը կարծէ գտնել իր ոյժը....

.....

Յատուկ ճիգ կը պահանջէ յաղթահարելու համար դուն քեզ, եւ անագնութեան դիմաց շարունակել ազնիւ ըլլալ....անարդարութեան դէմ՝ արդար ու իրաւ, ստորնութեան դէմ՝ վեհոգի ու վեհսիրտ....Այդ կը պահանջէ սակայն արժանապատուութիւնդ, ներքին բարոյական ազատութիւնդ....Սա չէ՞ վերջապէս բուն ազատութիւնը, երբ վերջինը չի պայմանաւորուիր այլոց վերաբերմունքով, վարուելակերպով...: Կրնա՞յ մարդ էակը ազատ ըլլալ, եթէ անիրաւութեան պատասխանէ անիրաւութեամբ, անկրթութեան՝ անկրթութեամբ, վատութեան՝ վատութեամբ...Ինքզինք ըլլալ անպայմանականօրէն....Սա է, ըստ իս, իրաւ ազատութիւնը....



.....

Խոնարհութեամբ կը բարձրանաս, խոնարհութեամբ կրնաս սորվիլ, ուղղել սխալներդ, իմաստնանալ, խոնարհութեամբ կրնաս սրտակցիլ, հոգեկցիլ, կիսել այլոց ցաւերը, խոնարհութեամբ կրնաս զգալ ու հասկնալ ընկերդ, ծանօթդ, նոյնիսկ օտարականը....Խոնարհութեամբ կրնաս մարդ մնալ....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ

2015